



Փ Ա Ր Ո Մ *Paros*

ISSUE 75 OCTOBER / ԹԻԻ 75 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

ԹԵՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Կիր., 1 Հոկտեմբեր – Աղօթք Արցախի համար

Հոկտեմբեր 1-ին Սուրբ Էջմիածնի մեջ տեղի պիտի ունենար երկար սպասուած Միւռնօրհները: Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արք. Նաճարեան Առաջնորդ Հայրը արդէն իսկ Սուրբ Էջմիածին էր մասնակցելու Միւռնօրհներին: Աւստրալահայ ուխտաւորներ ալ պիտի ըլլային այնտեղ: Սակայն պատահեցաւ Արցախի աղէտը, եւ Միւռնօրհները յետաձգուեցաւ, յետաձգուեցաւ նաեւ թեմական կարգ մը ներկայացուցչուխտաւորներու ճամբորդութիւնը:

Վեհափառ հօր օրհնութեամբ եւ Հոգևոր Գերագոյն Խորհուրդի որոշումով, Հոկտեմբեր 1-ը նշանակուեցաւ աղօթքի օր նուիրուած Արցախի: Հայկական բոլոր եկեղեցիներուն մէջ, Հայաստան եւ Սփիւռք, տեղի ունեցաւ աղօթք: Յաւիտեան տարի ետք, աղօթքին մեծ բացական Արցախն էր...

Աւստրալիոյ երեք եկեղեցիներուն մէջ, յընթացս Պատարագի, կատարուեցաւ աղօթք: Սուրբ Յարութիւն եկեղեցոյ մէջ երեք քահանայ հայրերը, սարկաւազաց եւ դպրաց դասը, ինչպէս նաեւ հաւատացեալ ժողովուրդը մասնակցեցան անոր: Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան հետեւեալ խօսքերով հրաւիրեց ժողովուրդը աղօթքի.



բաժին հասած կեանքի ուղին:

Միրելիներ, այսօր, Հոկտեմբերի 1-ը, ՆՍՕՏՏ Գարեգին Բ ամենայն հայոց կաթողիկոսի օրհնութեամբ, յայտարարուած է համազգային աղօթքի օր: Եւ այսօր Մայր Աթոռ Սբ Էջմիածնի մէջ յատուկ սենեակներու մէջ պահուած մեր սրբազան բոլոր մասունքներն ու սրբութիւնները դուրս կը բերուին, որպէս բարեխօսութիւն մեր ազգի զաւակներուն:



«Միրելիներ, քաջատէղեակ էք, որ հայոց Արցախ աշխարհը արդէն հայաթափուած է եւ հարիւր հազարէն աւելի հայորդիներ իրենց ծննդավայրը լքած, բռնագաղթած են Հայաստան: Չեմ ուզեր մանրամասն նկարագրել այդ անասելի ցան ու տառապանքը, որ այս օրերուն կը կրէ մեր ժողովուրդը:

Եւ համազգային ողբերգութեան, անասելի ցաւի ու տառապանքի այս օրերուն, երբ ամենուր ականջալուր ենք թշնամական արտայայտութիւններու, ատելութեան ու ցաւի՝ մեր ժողովուրդին անհրաժեշտ է լեցուիլ Քրիստոսի սիրով, եւ ամենակարեւորը, որ մեզի շատ կը պակսի, ըլլալ միաբան, և այդ գիտակցութեամբ, արժանապատիւ քալել մեր աղօթքի ճանապարհը, մեզի



Միրելիներ, այս օրը մեր ազգին համար թող ըլլայ Աստուծոյ հետ ուխտի օր, ինքնամաքրման, միաբանութեան, հաւատքի եւ հայ ինքնութեան վերանորոգութեան, պայքարի, յաղթանակներու, մեծամեծ ձեռքբերումներու նոր սկիզբ:

Միայն պէտք է միաբանիլ Աստուծոյ եւ իրար հետ, երթալ առաջ, բայց երբեք չկտրուիլ մեր փառաւոր արմատներէն, քանզի հազարամեակներով այդպէս ապրած ենք, «մնալով փոքր ածու», իսկ շատ հզօր ազգեր, այսպէս կոչուած աշխարաքաղաքական կարգ թելադրողներ, փոշիացած են պատմութեան անդուլ անապատներուն մէջ: Հաւատացէք որ Հայ Ազգը վերջ

չունի, քանզի մենք գիտենք ինչպէս խաւարը վերածել լոյսի, սուգը՝ յաղթանակի: Այժմ կը հրաւիրեմ բոլորդ աղօթքի»:

Կիր. 8 Հոկտեմբեր – Ինչպէս յայտարարուած էր Մայր Աթոռի կողմէ, թէ 8 Հոկտեմբերին տեղի պիտի ունենար եպիսկոպոսական ձեռնադրութիւն Ս. Էջմիածնի մէջ: Ի ներկայութեան հաւատացեալներու խումներամ բազմութեան, եպիսկոպոսական աստիճան ստացան Իրաքի հայոց թեմի առաջնորդ Հոգեշնորհ Ս. Օշական վարդապետ Կիւլկիլեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Տնօրէն ժողովի ատենապետ Հոգեշնորհ Ս. Թեոդորոս ծայրագոյն վարդապետ Զաքարեան, ԱՄՆ Հայոց Արևելեան թեմի առաջնորդ Հոգեշնորհ Ս. Մեսրոպ վարդապետ Պարսամեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կալուածոց տեսուչ Հոգեշնորհ Ս. Կորին ծայրագոյն վարդապետ Պաղտասարեան և Վիրահայոց (Վրաստանի) թեմի առաջնորդ Հոգեշնորհ Ս. Կիրակոս վարդապետ Դաւթեան: Այս վերջինս երեք տարի որպէս հոգեւոր հովիւ ծառայած է Մելայուրնի Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ: Թեմիս Առաջնորդ Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արք. Նաճարեանին տրուած էր Խարտաւիլակի պատուաբեր պաշտօնը: Խարտաւիլակ բառը յունարէն ծագում ունի (Խարթոֆիլաքս): Ան այն հոգեւորականն է, որ կրօնատրի ձեռնադրութեան ատեն, զգեստաւորուած, ձեռնադրողին կը ներկայանայ խնդրելու որ ան ձեռքը թեկնածուին գլխուն դնէ եւ հրապարակաւ վկայութիւն կու տայ ձեռնադրուողին արժանաւորութեան մասին: Հայկազուն Սրբազան հայրը ներկայացուց հինգ հոգեւորականները Կաթողիկոսին, եւ խնդրեց որ զանոնք ձեռնադրէ եպիսկոպոս, որոնց արժանիքներուն մասին ան վկայեց եւ առաւ այդ վկայութեան պատասխանատուութիւնը:



Մանրամասնութիւնները կարդալ «Լուրեր Էջմիածնէն» բաժինին մէջ:



Կիր., 8 Հոկտեմբեր – Գաղութիս զաւակներուն համար կարեւոր էր այս օրը, որովհետեւ ան կը զուգադիպէր Համազգայինի հիմնադրութեան 95-ամեակի պաշտօնական հանդիսութեան: Ի դէպ, Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւնը հիմնուած է 28 Մայիս 1928-ին Գահիրէի մէջ:

Ձեռնարկը կը հովանաւորուէր Առաջնորդ Սրբազան Տէր Հայկազուն Արք. Նաճարեանի կողմէ: Սրբազան հօր Հայաստան գտնուելուն պատճառով Սրբազնութիւնը ներկայացուց Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանը:

Ներկայ էին նաեւ Աւագ քահանայ հայրեր Արժ Տէր Նորայր Բաթանեանն ու Տէր Պարթեւ Գարագաշեանը, ինչպէս նաեւ Արժ Տէր Միւռն Քահանայ Աւետիսեանը: Թեմական խորհուրդը կը ներկայացնէր Տիար Սարգիս Տէր Պետրոսեան:



800-ի շուրջ հայորդիներ, որոնց կարգին հոգեւոր հայրեր եւ հայկական կազմակերպութեանց ներկայացուցիչներ, Ուիլուպիի քաղաքապետուհի Տիկին Թանիա Թէլլըր եւ քաղաքապետարանի անդամ Պրն Սարգիս Մուրատեան, ներկայ էին Չացուուտի Քոնքորս սրահը, ըմբռնելու համար այն յատուկ յայտագիրը, որ ի գործ դրուած էր 8 մշակութասէր անհատներով կազմուած յանձնախումբի մը կողմէ, գլխաւորութեամբ Պրն Հարմիկ Յակոբեանի:

Յայտագիրը իր մէջ կը ներառէր բացման խօսք,

զոր կատարեցին Գօլստըն Ճեմարանէն երկու աշակերտներ՝ Ալիք Մանճիկեան եւ Կարօտ Մանուկեանը: Ապա Ճեմարանի խումբ մը աշակերտներ ներկայացուցին Գեորգ Էմինի «Յաւերժի Ճամբորդը», պանծացնելով Հայոց պատմութիւնն ու հայ ժողովուրդի արժանիքները: Ճեմարանի «Փայլող Աստղեր» երգչախումբը ներդաշնակ ձայներով ներկայացուց «Ազգ Փառապանծ»ը, խմբավարութեամբ Տիկին Փէրի Մինասեանի, որմէ ետք երեք Շաբաթօրեայ վարժարաններու (Թարգմանչաց, Թումանեան, Փափագեան) միացեալ խումբը ներկայացուց «Սարդարապատ» եւ «Հայաստանը Մենք Ենք» խմբերգները, ղեկավարութեամբ Տիկին Շուշան Սահակեանի:



Նոյն խումբին միացան Գօլստըն Ճեմարանի աշակերտներ, միասնաբար ներկայացնելու Համազգայինի հիմնադիրներէն չորսը՝ Լեւոն Շանթ, Նիկոլ Աղբալեան, Համօ Օհանջանեան եւ Գասպար Իփէկեան:

Գօլստըն Ճեմարանի խումբը նաեւ ներկայացուց հայրենասիրական երգերու շարք մը, խանդավառելով մթնոլորտը: Մելպուրնի Համազգային Մեսրոպ Մաշտոց-Մատթէոսեան վարժարանը անմասն չէր մնացած: Աշակերտները տեսերիզով



ներկայացուցին 10 վայրկեան տելոդութեամբ կոկիկ յայտագիր մը՝ երգեր եւ արտասանութիւններ:

Տաղանդաւոր երաժիշտ եւ դաշնակահար Տիկին Զելա Մարկոսեանի հիմնած «Զելա Մարկոսեան Քառեակ»ը բարձրորակ կատարողութեամբ նուագեց Զելայի ստեղծագործած «Կանխատեսում (Forecast)»ը եւ Ա. Պապաճանեանի «Անուրջներ»ը: Իսկ դաշնամուրի նուագակցութեամբ Զելայի՝ հանրաճանաչ Լիլիթ Սոփրանօ, Աւստրալահայ Օփերայի մեծատաղանդ երգչուհի Նաթալի Արոյեան մեներգեց Փուչինիի «Վիսսի Տարթէ»ն եւ Կոմիտասի «Չինար Ես»ը: Համազգայինի Պարի Անսամբլը մէջ ընդ մէջ կատարեց Եարիսուշտան, Արցախի Աղջիկներ եւ Ազգագրական պարերու շարք մը, իսկ Նայիրի պարախումբը ներկայացուց Սասունի Պարը եւ Տաւիղը: Համազգային Նայիրի Երգչախումբը, դեկավարութեամբ Տիկին Ադանի Մարգարեանի, ներկայացուց Հոռովելը, Երագ Իմ Երկիրը եւ Ելէք Ոտքի Հայ Ժողովուրդ» խմբերգները:

Մեծ խանդավառութիւն ստեղծեց սիրուած երգիչ Օհաննէս Օհաննէսեանը, որ ելոյթ ունեցաւ «Մարտիկի Երգը» եւ «Բարի Արագիլ» երգերով, առատ ծափողջոյններ խլելով հանդիսականներէն:

Տրուած ըլլալով որ 2023-ը կը զուգադիպի Համազգայինի Աւստրալիոյ մէջ հիմնադրութեան 60-ամեակին, ցուցադրուեցաւ պատմական տեսերիզ մը:

Նուպար Խաչատուրեան Թատրոնը ներկայացուց «Պայքար» այժմեական ազգային մտահոգութիւն պարունակող թատերախաղը, հեղինակ՝ Տիկին Ազնիւ Ինկիլիզեան:



Համազգայինի Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ Պրն Գեորգ Վարդանեան, որ իր յարգանքը մատուցել է տըր Արցախի մեր բռնահանուած ժողովուրդին, խօսեցաւ Համազգայինի առաքելութեան, անդրադառնալով ապագայ մարտահրաւերներուն՝ մարդակերտման եւ հայակերտման բնագաւառներուն մէջ: Շրջանային Վարչութեան ապագայ տեսլականին անդրադառնալով, Վարդանեան շեշտեց Համազգայինի երիտասարդացման կարեւորութիւնը:

Համազգայինի Կեդրոնական Վարչութեան անդամ Պրն Հերոս Գրիգորեան անհանգստութեան պատճառով բացակայ էր, անոր սրտի խօսքը կարդաց Տիկին Վարդէնի Խուտեցեան-Միսաքեանը:

Անդրադառնալով այսօրուան դժուարութիւններուն, Գրիգորեան

շեշտեց այն իրողութիւնը թէ Հայ մշակոյթին դէմ պատերազմ է որ կը մղուի այսօր, իսկ Համազգայինը այդ պատերազմը կը մղէ եւ պիտի շարունակէ մղել առանց վիատելու:

Շրջանային Վարչութեան խնդրանքով, Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը իր շքանշանով պատուեց երկու վաստակաւոր համազգայնականներ, յանձինս Էտի Վեցմատեանի եւ Ասատուր Շուկայեանի: Վեցմատեան բազում տարիներ ծառայած է Համազգայինի վարչական գործերու ընդմէջէն նաեւ արուեստի ցուցահանդէսներ կազմակերպած (Biennial) Աւստրալահայ



արուեստագետներու (նկարչական, լուսանկարչական, քանդակագործութեան մարզերէ ներս), Միտնիի, Երեւանի եւ Շուշիի մէջ: Ասատուր Շուկայեան, դարձեալ երկար տարիներու ծառայութիւն ունի Համազգայինին եւ մանաւանդ որպէս Հայերէն լեզուի ուսուցիչ միօրեայ եւ ամէնօրեայ վարժարաններու: Շքանշանները եւ վկայագիրները յանձնեցին վաստակաւոր համազգայնական Յակոբ Զառացեանն ու Գեորգ Վարդանեանը:



Հանդիսութեան երկրորդ արարի սկիզբը սրտի խօսք արտասանեց Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան: Ան գուգահեռ մը քաշեց Համազգայինի հիմնադիր անդամներու տեսիլքին ու մտայնացման եւ Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթեւի տեսլականներուն միջեւ, որոնք Հայութեան յարատեւութիւնը տեսած էին Հայ գիրին, մշակոյթին եւ հաւատքի պահպանման մէջ: «Այս առիթով «կը շնորհաւորեմ բոլորս», նուիրեալ բոլոր անդամները փառած Համազգայինի նուիրական գործին» ըսաւ Տէր հայրը: Ապա ան ընթերցեց Սրբազան հօր սրտի խօսքը, զոր կը ներկայացնենք ստորեւ.

Առաջնորդ Սրբազան Հօր Պատգամը Համազգային-ի Հիմնադրութեան 95 Ամեակին Առիթով

« Զի թէպէտ եւ եւնք ածու փոքր, յոյզով անգամ նուաճեալ թագաւորութեամբ... սակայն բազում գործ արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս արժանի գրոյ յիշատակի»

Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթեւ եւ Վռամշապուհ Արքայ, զգալով բաժանեալ Հայութեան գլխուն կախուած վտանգը, գիր ու գրականութիւն ստեղծեցին, պահելով Հայ ժողովուրդի միասնականութիւնը, եւ ամրակոտ բռունցքի մը վերածեցին զայն, դիմակայելու ամէն տեսակ վտանգ, որ կը սպառնար Հայ ժողովուրդի գոյութեան: Այս, երբ տակաւին մեր հայրենի հողերուն վրայ էինք, ուր ամէն մէկ սար, դաշտ ու ձոր, գետ ու աղբիւր կը խօսէր մեզի մեր պապերուն թողած պատմութեան եւ մշակոյթին մասին: Արեւմտահայերու արտաքսումէն ետք, իրենց բնիկ օրրանէն եւ Կիլիկիոյ պարպումէն ետք, ի՞նչ պիտի ըլլար ճակատագիրը իր հողերէն արտաքսուած Հայու բեկորներուն, որոնք սփռուած էին ողջ աշխարհի մէջ:

Դժուարութիւններու եւ տառապանքներու մղձաւանջը հանճարներու ուղեղները յղի կը դարձնէ միտքերով, որոնք փրկութեան լաստ կը հանդիսանան անյոյս եւ մթութեան մէջ կործանումի դատապարտուած իլեակներուն:

Ինչպէս 5-րդ դարուն, նոյնպէս եւ 20-րդ դարուն, մշակոյթը կու գար դառնալու Հայուն փրկութեան լաստը: Այս անգամ տեսիլքը կ'ուրուագծուէր Լեւոն Շանթի մտքին մէջ, որ իր գաղափարը կը կիսէր Նիկոլ Աղբալեանի հետ: Անոնց լծակից կ'ըլլային ժամակի լուսաւոր դէմքեր եւ Գահիրէի մէջ կը հիմնուէր Համազգայինը պաշտօնապէս, 28 Մայիս 1928-ին: Համազգայինը իր մէջ ընդգրկեց մշակոյթի բոլոր դրսեւորումները, ինչպէս Դպրոց ու Թերթ, Լեզու եւ Գրականութիւն, Պատմութիւն, Երաժշտութիւն, Թատրոն եւլն: Համազգայինի բովէն անցած մարդիկ, անկախ իրենց աշխատանքի բնագաւառէն, դարձան կամաւոր զինուորները Հայ Մշակոյթին: Այսօր, աւելի քան 95 տարիներ, կը շարունակուի այդ լուսաւոր եւ նուիրեալ աշխատանքը աշխարհի չորս ծագերուն, պահելով Հայը գիտակից եւ հպարտ իր Մշակոյթի ժառանգութեամբ:

Յոյժ գնահատելով 95 տարիներուն Հայակերտումի եւ Հայապահպանման ի նպաստ ջանքն ու աշխատանքը, Համազգայինին կը մաղթենք նոյն ոգիով եւ նուիրումով դաստիարակելու իրերայաջորդ սերունդները, յառաջիկայ հարիւրամեակներուն:

Յաջողութեան բարի մաղթանքներով եւ օրհնութեամբ՝
Հայկազուն Արք. Նաճարեան



Կիր., 15 Հոկտեմբեր – Սրբոց Թարգմանչաց տօնը, ժողովրդական լեզուով «Թարգմանչաց»ը Հայ ժողովուրդի մեծ տօներէն է: Այդ օր, Սրբազան հայրը, Ս. Յարութին Մայր Եկեղեցոյ մէջ, կը մատուցէ եպիկոպոսական պատարագ նուիրուած մեր Թարգմանիչներուն:

Ուրբաթ 13 Հոկտեմբերի գիշեր Սրբազան Հայրը վերադարձաւ

Սուրբ Էջմիածնէն: Կիրակի, յընթացս Պատարագին, Թարգմանչաց նուիրուած իր քարոզին մէջ, ան հաստատեց որ քիչ ազգեր աշխարհի մէջ թարգմանիչներու նուիրուած տօն ունին: Հայ թարգմանչաց սերունդը սովորական թարգմանիչներ չէին, անոնք «թարգմանը հանդիսացած էին Աստուածային Սուրբ Գիրքին, ուր Աստուած Ինք կը խօսէր»: Սրբազանը ըսաւ թէ որպէսզի Քրիստոնէութիւնը միս ու արիւն դառնար Հայ ժողովուրդին՝ բան մը կը պակսէր: Իսկ այդ «բան»ը գտնողը, հոգեկան թռիչք ունեցող անձ մը պէտք էր ըլլար, այդ եղաւ Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարդապետը: Ան իր մտահոգութիւնն ու տազնապը յայտնեց իր կաթողիկոսին, Սահակ Պարթեւին, որ գտնոնք իւրացուց եւ փոխանցեց Վռամշապուհ արքային: Եւ այդ պարսկական անուն կրող թագաւորը Հայերէն տառերուն հողը պատրաստեց, ուր ծիլ արծակեցին մեր 36 Հայերէն գիրերը: 36 «զինուորներ», որոնք յեղափոխեցին հայ ժողովուրդին հոգին: Եթէ այդ գիրերը չըլլային, այսօր ոչ եկեղեցիներ, ոչ գրականութիւն, ոչ հայկական դպրոցներ պիտի ըլլային: Այդ 36 զինուորները յաւիտենական դարձուցին Հայը»:



Սրբազանը աւելցուց ըսելով. «Հաւատացէք, այս օտար ափերուն մէջ, այնքան ատեն որ հաւատարիմ ենք մեր գիրին եւ մշակոյթին, մեզ ոչ մէկ բան կրնայ զգետնել: Այդ հաւատարմութիւնը իրական կը դառնայ, երբ նորածին Հայ մանուկը, առաջին օրէն, կը լսէ Հայերէն, կը մեծնայ Հայերէնով, կը մեծնայ իր մշակոյթով: Սրբազան պարտականութիւնն է այս Հայ մօր, Հայ ծնողքին եւ մեծ ծնողաց: Երբ երեխան իր լեզուն կը խօսի՝ այդ լեզուն կը դառնայ իր հայրենիքը, իր արմատները: Այդպիսով է որ մեր Թարգմանիչները կենդանի կը պահենք, այլապէս անոնք կը հիւծին, կը մաշին, այն ատեն է որ անոնք կը մահանան...»: Սրբազանը կոչ ուղղեց ըսելով. «Հայ մայրեր, Հայ հայրեր, հացէն, ջուրէն աւելի կարեւոր են մեր մշակոյթը, գիրը եւ հաստքը: Սահմաններ (*մեր հայրենիքին խմբ.*) կրնան փոխուիլ բայց դուք Հայ գիրին արժէքը պիտի չփոխէք: Հայ գիրը բերդ մըն է, որ դուք ձեր տան մէջ պիտի կառուցէք, իսկ այդ կ'ըլլայ հայերէն խօսելով. երբ հայերէնը ձեր տան մէջ կենդանի է, ո՞վ կրնայ փլել ձեր շինած բերդը...»:

Նախքան Քովիտ, Առաջնորդարանը Թարգմանչաց Պատարագին կը հրաւիրէր Սիտնիի բոլոր Հայ ուսուցիչները, որոնք ճաշի հիւրերը կ'ըլլային Առաջնորդ Սրբազան հօր: Քովիտէն ետք, ոչ միայն Սիտնիի, այլ թեմի բոլոր հայկական վարժարաններու ուսուցիչներն ու աշխատակիցները կը հրաւիրուին առցանց տօնելու Թարգմանչաց եւ Ուսուցիչներու տօնը, որուն կը հրաւիրուի դասախօս մը: Այս տարուան դասախօսը Պէրոյի Հայկազեան Համալսարանի նախագահ Վերապատուելի Փօլ Հայտոսթեանն էր: Մանրամասնութեանց համար տես 22 Հոկտեմբերի մեր զեկուցումը:



Կիր., 15 Հոկտեմբեր – Սրբազան հոր հովանաւորութեամբ եւ կազմակերպութեամբ Համազգայինի Շանթ մասնաճիւղի վարչութեան, Էտկարեան սրահին մէջ տեղի ունեցաւ գրական գեղեցիկ երեկոյ մը՝ Շնորհահանդէս Տիկին Զարուհի Մանուկեանի «Ոգեղէն Պայքար» արձակ եւ բանաստեղծութեանց հատորին, հրատարակութիւն Շանթ Մասնաճիւղի, ի ներկայութեան Սրբազան Հօր, Թեմական եւ ծխական խորհուրդներու անդամներու, քահանայ հայրերու, Համազգայինի Շրջանային Վարչութեան եւ մասնաճիւղերու ներկայացուցիչներու, հայկական տարբեր կազմակերպութիւններու ներկայացուցիչներու, Րայտի քաղաքապետ Պրն Սարգիս Ետէլեանի եւ վաթսունի հասնող հայ գրականութեան հետ աղերս ունեցող հայորդուոց, ինչպէս նաեւ Տիկին Մանուկեանի ընտանիքի անդամներու եւ բարեկամներու:



Շանթ մասնաճիւղի վարչութեան անդամ եւ Առաջնորդարանի քարտուղարուհի Տիկին Նանոր Մանուկեան Աշիքեանի բարի գալստեան խօսքէն ետք հանդիսավարուհի Տիկին Շուշան Սարեան-Սահակեան ներկայացուց Տիկին Մանուկեանի կենսագրական գիծերը: Աւարտելէ ետք Հալէպի Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանը, Տիկին Մանուկեան երկու տարի հայերէն լեզու կը դասաւանդէ Հալէպի Հայկազեան Վարժարանի եւ ապա՝ 9 տարի Պէյրութի Ազգ Էհրամճեան վարժարանին մէջ: Աւստրալիա գաղթելէն ետք, ան 46 տարի ծառայած է որպէս ուսուցչուհի եւ տնօրէն Համազգային Թարգմանչաց Վարժարանին: Իր աշակերտուհիներէն եղած է նախկին նահանգապետուհի Գլատիս Պերէճիքլեանը: Ան նաեւ ծառայած է Չացուուտի Համայնքային Լեզուներու Կեդրոնին մէջ որպէս Հայերէնի դասատու, եղած է պետական քննութեանց հայերէն ծրագրի պատրաստող յանձնախումբի անդամ, պետական քննութիւն ընդունող եւ սրբագրող: Հեղինակ է 4 գրական գիրքերու:

Իր անսակարկ համայնքային ծառայութեանց համար, Տիկին Մանուկեան պարգևատրուած է Ուիլուպիի քաղաքապետարանի, ինչպէս նաեւ Հայաստանի Սփիւռքի նախարարութեան կողմէ:

Մեծ անակնկալ էր ելոյթը Տիկին Մանուկեանին չորս թոռներուն, որոնք արտասանեցին անոր հեղինակած բանաստեղծութիւններէն: Գնահատելի երեւոյթ եւ դրուատանքի արժանի:

Գիրքը, որ կը բաղկանայ 126 էջերէ, 29 արձակ եւ 27 ոտանաւոր բանաստեղծութիւններէ, ներկայացուցաւ Պրն Վիգէն Գալլօղլեանի կողմէ: Ան ընթերցեց «Մոռնալ Երբէք Քեզ» Տիկին Մանուկեանի աշակերտներէն մեկուն վկայութիւնը, յանուն 500-է աւելի իր դաստիարակած աշակերտներուն, ուր զինք կը բնորոշէ որպէս «Մայրենիին ոգին իր աշակերտներուն փոխանցող, նոր հորիզոններ բացող եւ յատուկ դասաւանդման ձեւ ունեցող ուսուցիչ», որոնց շնորհիւ ան կարողացաւ դաստիարակել հայեցի շունչով:



Պրն Գալլօղլեանի առաջին գնահատանքն էր Մանուկեանի գիրքին մէջ գործածուած մաքուր հայերէնը: Ան Զարուհի Մանուկեանի մարդկային եւ գրական արժանիքները ներկայացուց պատառիկներ կարդալով եւ իր գնահատանքը տալով իւրաքանչիւրի պարագային: Այսպէս, ան ընթերցեց արձակներէն «*Եղիր Ուղղամիտ*»ը, ուր հեղինակը կը յորդորէ ըլլալ ուղղամիտ եւ պահել Հայերէնը, աւանդութիւնները, հաւատքն ու ինքնութիւնը, «*Վեց տարեկան աղջիկը*», ուր կ'արտացոլայ Հայ լեզուի նահանջին դէմ մարտնչող Զարուհին, «*Որքան Կարեւոր*», ուր հեղինակը կը շեշտէ մայրերու եւ մեծ մայրերու խաղացած մեծ դերին վրայ մանուկը Հայ մեծցնելու գործընթացին մէջ, «*Յետադարձ Ակնարկ*», ուր կ'ահագանգէ հայաբոյր Պէյրութի մէջ իսկ ձուլման վտանգին, «*Հայուհի*», ձօնուած իր դատեր՝ Մարալին որ մօր օրինակով իր զաւակները հայու ոգիով մեծցուց, «*Բեկոր մը եւս*», որ կը վերաբերի վերադարձ արմատներու:



«Զարուհի Մանուկեանի ոտանաւոր բանաստեղծութիւնները կը վերաբերին մեր ազգային իդէերուն իրականացման» ըսաւ Պրն Գալլօլեան եւ որպէս նմուշ ընթերցեց հետեւեալ վերնագիրներով բանաստեղծութիւնները. «Ազգ իմ հօր», «Մայրենի լեզու», «Շուշան», «Տրտունջ», «Չսիր», ուր Զարուհի Մանուկեան կը պատգամէ թէ պայքարի դաշտէն նահանջ չկայ մեր սերունդներուն:

Կարդացուեցան շնորհաւորագրեր «Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարան»ի խնամակալութենէն ու Տնօրէնութենէն, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամուհի Տիկին Նորա Սեւակեանէն, ուր Տիկին Մանուկեանը կ'որակէ «...իր ազգն ու իր հայրենիքը իր անձէն աւելի սիրող տիպար եւ օրինակելի հայուհի»:

Գեղարուեստական յայտագրին մէջ իր յատուկ բաժինը ունէր

ասմունքի անկրկնելի վարպետ Վարուժան Մանճեանը, որ, ի միջի այլոց, արտասանեց Զարուհի Մանուկեանի բանաստեղծութիւններէն եւ իր կիթարիստ որդւոյն Արամ Մանճեանի նուագակցութեամբ երգեց Բարի Արագիլը, որոտընդոստ ծափեր խլելով ներկաներէն:

Օրը կը զուգադիպէր Տիկին Մանուկեանի տարեդարձին: Որպէս անակնկալ, կազմակերպողները սրահ բերին կարկանդակ մը, զոր հատեց յոբելէարը, որմէ ետք արտասանեց իր սրտի եւ շնորհակալութեան խօսքը: Ան իր բնորոշումը տուաւ Հայ ուսուցչին, որպէս ազգային գանձը յաջորդ սերունդին փոխանցող եւ իր երախտագիտութիւնը յայտնեց անցեալի ծնողներուն, որոնք իր հետ գործակցեցան եւ հասցուցին այսօր կրթութեան եւ մշակոյթի բնագաւառներու մեր կառոյցներուն մէջ աշխատող գործունէայ սերունդը: Խօսքը աւարտլէն ետք, ներկաները յոտնկայս եւ երկարատեւ ծափահարութեամբ յայտնեցին իրենց սէրն ու յարգանքը բոլորի՛ն սիրելի Տիկին Մանուկեանին:

Իր փակման խօսքին մէջ, Սրբազան հայրը իր շնորհակալութիւնը յայտնեց Շանթ Մասնաճիւղին կազմակերպելու համար այս հազուադէպ յոբելէնական շնորհահանդէս-երեկոն: «Շնորհակալ եմ որ արժանին տուիք գրչի եւ կրթութեան այս մշակին, որ 55 տարի իր ազգի՛ն տուած է: Դժուար է ուսուցիչ ըլլալ այս ամբարձու մէջ եւ նուիրուիլ Հայ մշակոյթին: Այսօր զուգադիպարար Թարգմանչաց տօնն է: Այսօր Մեսրոպ Մաշտոց ուրախ է երկնքի մէջ, հոգին կը հրճուի, որովհետեւ Զարուհի Մանուկեան Հայեցի Կրթութեան Մշակը տէ՛ր եղած է իր ստեղծած այբուբենին»: Խօսելով «Ոգեղէն Պայքար»ի մասին Սրբազանը ըսաւ «իր գիրքին մէջ Զարուհի Մանուկեան յարատեւ կը հնչեցնէ նոյն ահագանգը, զգուշացնելով այսօրուան խաղաղ պայմաններէն, որոնք կը փորձեն տապալել Հայն ու իր ինքնութիւնը: Իր գրութեանց մէջ կ'արտացոլան իր տեսլականն ու պայքարի ոգին, նաեւ իր կեանքի փիլիսոփայութիւնը, որ կը վերաբերի ազգի լինելութեան, հաւատքին եւ ապագային»:

«Այս յարգանքին դուք արժանի էք», եզրափակեց Սրբազանը: Ապա Պահպանիչով օրհնեց յոբելէարն ու հաւաքուած բազմութիւնը:

Հանդիսութենէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն ընթացքին Տիկին Մանուկեան մակագրեց գիրքերը:

Գ2., 17 Հոկտեմբեր- Սրբազանը նախագահեց Կալուածոց Յանձնախումբի վարչութեան հերթական ժողովին:

Դ2., 18 Հոկտեմբեր - Սրբազան հայրը նախագահեց Հայ Համայնքի Բարեկէցութեան Կեդրոնի Խնամակալ Մարմնի հերթական ժողովին:



ՂԶ., 18 Հոկտեմբեր – Աստրալիոյ Ազգային Եկեղեցիներու Խորհուրդին (National Council of Churches, Gathering of National Churches Leaders) Ազգային եկեղեցիներու ղեկավարներու ժողովը տեղի ունեցաւ առցանց: Մանրամասնութիւնները տեսնել էքիւմէնիք Լուրերու բաժինին մէջ:

Վիր., 22 Հոկտեմբեր – Յաւարտ Սուրբ եւ Ամնահ Պատարագին, Սրբազան հայրը, ընկերակցութեամբ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, այցելեց աւանդական երիտասարդական դաշտահանդէս-Փիքնիքին: Այս ձեռնարկը կը կազմակերպուի միասնաբար Հայ Եկեղեցւոյ Երիտասարդական Միութեան (ACYA եւ ՀԲԸՄ-ի երիտասարդական միութեան վարչութեան կողմէ: Մանրամասնութիւնները տեսաւելի ուշ:

Վիր., 22 Հոկտեմբեր – Ինչպէս յայտնած էինք վերը, 22 Հոկտեմբերին Թարգմանչաց եւ ուսուցչաց սօնը առցանց տօնուեցաւ նախագահութեամբ Սրբազան հօր: Մասնակցեցան հայկական ամենօրեայ երկու վարժարաններու՝ ՀԲԸՄ Ալեքսանդր վարժարանի եւ Համազգային Գօլստըն ճեմարանի տնօրէնութիւնը, ուսուցիչներ, ինչպէս նաեւ միօրեայ եւ կիրակնօրեայ վարժարաններու ուսուցիչներ, Համազգային Թարգմանչաց, Թումանեան, Փափագեան, Մեսրոպ Մաշտոց-Մատթէոսեան (Մելպուրն), ՀԲԸՄ Ալեք Մանուկեան, Ակինեան (Մելպուրն), կիրակնօրեաներ՝ Սուրբ Յարութիւն եւ Սուրբ Երրորդութիւն եկեղեցիներու: Հանդիսավար Լշան Պասմաճեան ներկայացուց օրուան բանախօս, 2002 թուականէն մինչեւ օրս Պէրյուրի Հայկազեան Համալսարանի նախագահ Վերապատուելի Փօլ Հայտոսթեանը, տալով անոր հակիրճ կենսագրութիւնը, զոր կը գտնէք ստորեւ:



1984-ին վերապատուելին հոգեբանութեան ճիւղին մէջ կը ստանայ պսակաւոր արուեստից իր վկայականը Հայկազեան համալսարանէն:

1987-ին Պէրյուրի Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական ճեմարանէն (Near East School of Theology) կը ստանայ իր մագիստրոսի վկայականը: Ապա կը մեկնի Նիւ Ճըրզի, եւ Փրինսթըն Աստուածաբանական ճեմարանէն կը ստանայ մագիստրոսի երկրորդ վկայականը (Th. M.) այս անգամ Հովուական Աստուածաբանութեան մէջ (Pastoral Theology):

Նոյն համալսարանէն կը ստանայ իր Դոկտորայի վկայականը, PhD in Pastoral Theology, 1994-ին:

Այժմ Վերապատուելին աւենապետն է Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան, եւ համանախագահ՝ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին (MECC):


Վերապատուելին ղեկավար անդամ է բազմաթիւ միջազգային, տարածաշրջանային, կրթական, եկեղեցական եւ միջ-եկեղեցական էքիւմէնիք մարմիններու:

Վերապատուելի Հայտոսթեան նախ հակիրճ ներկայացուց Հայկազեան համալսարանը այնպէս ինչպէս է այսօր: Համալսարանը ուսուցչական վերապատրաստումի դասընթացքներ է վկայականէ զատ կու տայ նաեւ Bachelors and Masters վկայականներ: 750 ուսանողներէն մօտ 300-ը Հայեր են, մեծամասնութեամբ Լիբանանէն, փոքր թիւով՝ Հալէպէն, Քեսապէն, Արաբական Էմիրութիւններէն,

Քուէյթէն: Լիբանանը աներեւակայելի տնտեսական տագնապի մէջ է, հետեւաբար հսկայ գումարներ կը ծախսուին կրթանպաստներու վրայ, որպէսզի Հայ ուսանողութիւնը կարենայ բարձրագոյն ուսում ստանալ:

Արդիւնքները գերազանց են, Վերապատուելիին խօսքերով՝ «Հոյակապ յաղթանակներ կան պարտուած օրերու մէջ...»: Համալսարանը կու տայ նաեւ Bachelors degree in Armenian Studies, նաեւ կիսամեայ դրութեանը 4 հայագիտական նիւթ կը տրուի մատչելի Հայ թէ ոչ Հայ ուսանողին: 1970-էն ի վեր կը հրատարակուի Հայկագեան Հայագիտական Հանդէսը (Haigazian Armenological Review), այժմ տարին երկու հատոր: Հետաքրքրական էր իմանալ որ Հայկագեանը ունի Haigazian University Press-ը, արդէն 52 գիրք հրատարակած է այս հրատարակչականը: Իսկ Haigazian Diaspora Research Centre-ը կը կազմակերպէ գիտաժողովներ (Symposiums), հրատարակութիւններ եւայլն: «Գիտակից ենք թէ ինչ դեր պէտք է խաղանք, ատոր համար մենք մեր աշխատանքով բաւարարուած չենք:» համեստօրէն յայտարարեց Վերապատուելին:

Անցնելով նիւթին, բանախօսը նախ ըսաւ որ 90-ական թուականներուն թափ առած միջազգայնացման գործընթացը իր մէջ առաւ նաեւ այն ինչ որ հայկական էր: Բնականաբար, կրթութեան նուիրուած անձերը կը ձգտին որ մեր ժողովուրդը ունենայ շարունակականութիւն եւ զարգացում:



- Ապա դասախօսը թուեց այն գործօնները, որոնցմով միջազգայնացումը ընթացաւ եւ կ'ընթանայ.
1. Հաղորդակցութեան միջոցներու արագութիւն եւ մատչելիութիւն:
 2. Լրատուութեան միջոցներու ինչպէս նաեւ Հոլիուտեան ֆիլմաշխարհի մատչելիութիւնը (Netflix etc)
 3. Փոխադրութեան արագ եւ ազատ միջոցներ:
 4. Անզլերէնի վերածումը միջազգային լեզուի
 5. Բազմազգ ընկերութիւններու գոյութիւնը ամէն երկրի մէջ (նոյն մակնիշի նոյն ապրանքը կը տեսնես բոլոր քաղաքներուն մէջ), օրինակ՝ Zara, Chanel, ելն (օրինակները Փարոսէն)
 6. Արհեստական Բանականութեան (ԱԲ) զարգացումը (Artificial Intelligence)
- Ասոնք իրենց ազդեցութիւնը ունին հինգ բնագաւառներու վրայ.
1. Տեղական լեզուներու օգտագործումը վտանգուեցաւ երբ նոր սերունդը մուտք գործեց այս միջազգայնացած աշխարհին մէջ:
 2. Դժուարութիւններ ստեղծուեցան ազգային մշակոյթներու սերունդէ սերունդ փոխանցման մէջ: Սերունդ մը ուզեց մշակոյթ փոխանցել յաջորդին բայց ինչպէ՞ս փոխանցել այս կացութեան մէջ:
 3. Խախտում ընտանեկան կառոյցի եւ ընտանեկան մթնոլորտի պահպանման մէջ:
 4. Հաւատամքի կամ պատմական հաւատքի զարգացում կամ պահպանում, այսինքն, այն բանին որ անցեալին հաւատացած էինք պիտի շարունակէ՞նք այդպէս հաւատալ:
 5. Տեղի ունեցաւ եւ կ'ունենայ անձնական եւ հաւաքական ինքնութեան խախտում:

Տեղի ունեցաւ սահմաններու վերացում: Վերապատուելին ամէն օր պատահող անձնական օրինակ մը տուաւ: «Երբ մինչեւ 5 տարի առաջ, համալսարանի բակը կը քալէի եւ ուսանողները կը բարեւէի՝ ոտքի կ'ելլէին եւ կը բարեւէին, հիմա՝ ոտքը պատին հանգչեցուցած, առանց շարժելու՝ բարի լոյսիս կը պատասխանուի Hi! Սա ժխտական մօտեցում չէ իր կողմէն, պարզապէս ինք այդ աշխարհին մէջ չէ, ինք չի նկատեր, իրեն համար սահման ըլլած բան չկայ»: «20 տարի առաջ կը խօսէին թէ *մէկ սերունդը միւսը չի հասկնար*, խօսքը կը վերաբերէր 20-30 տարի տարբերութիւն ունեցողներուն: Այսօր, Համալսարանին մէջ երրորդ տարուան ուսանողը նոր համալսարան մտած ուսանողին համար կ'ըսէ թէ *այս ինչ ճախող սերունդ է*: Հարց է այսօր որ **նոր սերունդը նոր սերունդին հետ քայլ պահելու դժուարութիւն ունի**»: Այլ օրինակ մը տուաւ Վերապատուելին. « Երբ երիտասարդ էի *թրանզիսթրը* բառիօ մը ունէի, լուրեր կամ երաժշտութիւն մտիկ կ'ընէի: Ծնողքս գիտէր ինչ մտիկ կ'ընէի: Այսօր, շնորհիւ ընկերային ցանցերու, նիւթերը ակնթարթի մը մէջ կը փոխուին եւ անկարելի է որ ծնողք մը կարենայ հետեւիլ: Սահմանները վերացած են եւ ասիկա խնդիր է»:




Այս բոլորին մէջ Հայ դպրոցին, եկեղեցիին համար հայկական ինքնութեան պահպանումի հարցը նոր իրականութեան մը առջեւ կը գտնուի եւ հետզհետէ կը դառնայ աւելի կնճռոտ: «Հետեւաբար ինչպէ՞ս Հայը Հայ կրնայ մնալ» հարց տուաւ դասախօսը եւ անցաւ քննարկման ազգային ինքնութեան նիւթին: Ան ըսաւ.

«Չկայ ազգային ինքնութիւն եթէ չկան.

1. Անցեալի խորհրդանիշներ
2. Յիշողութիւն
3. Արժէքներ եւ հաւատալիքներ , կրօնական կամ ոչ կրօնական
4. Ազգային ինքնութիւնը նշուածներով հանդերձ կապուած պիտի ըլլայ հողի մը հետ, որն է Հայրենիքը «Այս կէտերն են գորս մենք մեր դպրոցներուն մէջ կը փորձենք պահպանել, որոնք կը նկատենք հայեցի դաստիարակութեան հիմնաքարերը, որովհետեւ Հայու ինքնութիւնը հիմնուած է ասոնց վրայ»: Ապա այս 4 բաղադրիչները մէկ առ մէկ բացատրեց Վերապատուելին.
 1. Հարց կը ծագի այստեղ թէ ո՞ր խորհրդանիշները կարելոր են, ինչպէս օրինակ խաչը, այբուբենը, Արարատը, եւայլն եւ ո՞ր մէկուն կամ որո՞նց պէտք է արժէք տալ:
 2. Ի՞նչը յիշել եւ ի՞նչ բովանդակութեամբ: Հարկ է միշտ յաղթականի բովանդակութիւն տալ նոյնիսկ եթէ պարտութիւն պատահած է (Վարդանանց Պատերազմ): Իւրաքանչիւր գաղութ ալ ունի իր յիշարժան դէպքերը, օրինակի համար Աւստրալիոյ մէջ ի՞նչ է որ պէտքէ յիշել ազգային հպարտութիւն ստեղծելու համար, (առաջին կառուցուած եկեղեցի՞ն, առաջին դպրոցը, կարելոր ցոյց մը, ելին):
 3. Ո՞ր տեսակի հաւատալիքներ եւ արժէքներ պէտք է նկատի ունենալ, օրինակ Հանգանակներ, Խորհուրդներ, Աստուածաշունչ, Նարեկ, ելին: Ընտանեկան սրբութեան մասին կը խօսինք որպէս արժէք, ի՞նչ է Ընտանեկան սրբութիւնը, կամ ի՞նչ է Մարդու Իրաւունքը (Human rights), եւ **այս բոլորը ի՞նչպէս կը նպաստեն Հայուն..**
 4. Հայրենիքի ըմբռնումը ո՞ր կը սկսի, ո՞ր ժամանակաշրջանին, ո՞ր տարածքին համար: Օրինակ բերաւ դասախօսը ըսելով. «Հիմա Հայաստանի համար քարտէսներու կոնի կայ: Ամէն մէկ գիրքի մէջ տեսակ մը քարտէսի կը հանդիպիս: Մէկուն մէջ՝ Նախիջեւանով, ուրիշ տեղ մը ոչ, այսօր Արցախը ո՞ր նկատի առնել: Ասոնք այժմեական հարցեր են: Այլ հարց մը, Կիլիկիայէն եկանք Հալէպ, ապա՝ Լիբանան, ապա

գաղթեցինք Աստրալիա»։ Վերապատուելին իր օրինակով կու գար ըսելու թե քանի տեսակ ինքնություն կը կրէ Հայր։ Այս ալ այլ այժմեական հարց։ «Առաջ երբ մէկուն հարց տայիր թէ որտեղացի էր, կ'ըսէր՝ Հաճընցի, Այնթապցի եւայլն, հիմա կ'ըսէ Պէրուցի, Միսնիցի, Չահիլցի... Հետեւաբար, հայրենի հողի ըմբռնումը փոխուած է...»



Վերոնշեալներուն հետ համաշխարհայնացումը շատ արագ կը մրցի եւ կը շահի մրցումը, եւ չկայ բան մը որ զայն կասեցնէ, ասոր պատճառն ալ այն է որ մենք համաշխարհայնացումին բարի պտուղներն ալ կը քաղենք։ «Հետեւաբար, յաջորդ սերունդը ինքզինք բնականաբար եւ դիւրութեամբ համաշխարհայնացած պիտի սեպէ՝ Համաշխարհային Գիւղի (global village)-ի բնակիչ... այսինքն աշխարհի բնակիչ։ Ուստի, եթէ այս կը սպառնայ մեր Հայու ինքնութեան, ուրեմն ազգայինը պարտի մրցիլ անոր հետ եւ ինքն իր տեղը գտնէ եւ այդ մէկը այդքան ալ դժուար պէտք չէ

համարել։ Մենք մեզ պարտուած եւ յանձնուած պէտք չէ զգանք, սակայն կը տեսնենք որ փոփոխութեան կարիքը կայ։ Մեզի համար կարելոր է հայկականին պահպանումը կամ հայկականին զարգացումը։ Նոր սերունդն է որ պիտի պահպանէ եւ զարգացնէ հայկականը» ըսաւ դասախօսը։

Վերապատուելին ի յայտ բերաւ նաեւ խիստ կարելոր հանգամանք մը։ «Համաշխարհայնացած այս աշխարհը շատ մը բաներ ունի բայց բան մը կայ որ չունի, չունի ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐԴՈՒՆ ՀԱՄԱՐ ԽԱԽՄԻ, ՈՐՈՒՆ ԿԱՌՉԻ, այսինքն, լայն ովկիանոսի մը մէջ եւ, փոքրիկ նաւակի մը վրայ, ինչպէ՞ս պիտի թիավարես»։ Համաշխարհայնացած մարդուն համար աշխարհը անապահով է, հակառակ ամէն գիտութիւն իրեն մատչելի ըլլալուն։ Մինչդէռ տեղական մարդը, իր սահմանափակ գիտութեամբ աւելի ապահով զգացումը ունէր։ Այս օրերուն աշխարհը քուկո է, ամէն ինչ մատչելի է բայց քոթթրոլ չունիս, որը պատճառ կը դառնայ որ ստեղծուի շփոթ։ «Ուրեմն, կը տեսնենք որ մարդոց մէջ նոր տեսակի դիմադրողականութեան ինքնութիւն (protectionist identity) զարգացած է։ Այստեղ եւ որպէս Հայ կը գտնեմ որ ունինք նոր առիթներ»։ Իր միտքը բացատրելով Վերապատուելին ըսաւ որ այսօր դպրոցներուն մէջ «մասնաւոր դաստիարակութիւն – special education»-ի սիւթեմը կը զարգանայ։ Միեւնոյն ատեն «արհեստական բանականութիւնը – Artificial Intelligence (AI)»-ի գործածութիւնը արագ կը զարգանայ։

Վերապատուելին, որպէս օրինակ, կ'ենթադրէ որ 10-20 տարիէն իւրաքանչիւր աշակերտ իր ընտանիքը պիտի ունենայ, որ իր տնային պարտականութիւններուն իրեն օգնէ, փոխանակ ծնողքին։

Ուրեմն իր առաջարկն է որ մենք պատրաստուինք այս եւ այլ փոփոխութեանց եւ օգտագործենք այս փոփոխութիւնները հայու ինքնութեան պահպանման համար։

Ուստի, երբ աշխարհը սկսի գործնապէս որդեգրել special education եւ Artificial Intelligence-ի գործածութիւնը, Հայը պատրաստ պէտք է ըլլայ եւ պէտք է զանոնք օգտագործէ իրեն ի նպաստ։

Եւ այստեղ Վերապատուելին մատը դրաւ վերքին ըսելով. «Լեզուն, լեզուին տիրապետել, անփոխարինելի է լեզուն. ոեւէ մէկը նոյնքան հայ չի կրնար ըլլալ քան ան, որ լեզուին կը տիրապետէ։ Ան որ իր անցեալը չի կրնար հարազատօրէն կարդալ եւ հասկնալ եւ ճանչնալ՝ ամբողջ հարստութիւն մը կորսնցուցած կ'ըլլայ։ Հետեւաբար մեր նիւթական ներդրումները պէտք է ընենք նախ Հայերէն լեզուն սորվեցնելու, զարգացնելու, պահպանելու եւ տարածելու ձեւեր գտնելու ծրագիրներուն մէջ։ AI-ի միջոցաւ պէտք է կարենանք հայերէնն ու հայոց պատմութիւնը մատչելի դարձնել նաեւ ոչ հայուն։ Հետեւաբար պէտք է պատրաստուիլ AI-ի կարելիութեանց։ AI կարելիութիւն պիտի տայ մեզի դառնալու թարգմանիչներ եւ «Թարգմանչաց Տօնը» նոր իմաստ պիտի ստանայ։ Նոր «Թարգմանչաց»-ի մը պատրաստութիւնը պէտք է տեսնենք։


Եզրակացնելով, Վերապատուելին ըսաւ. «Թարգմանչացը Շարժում մըն էր բայց պարզապէս մէկ օրուան համար շարժում մը չէր։ Ուստի մենք ալ ջանասիրութեամբ պարտինք քննել, Հայրենիքի հետ

գործակցաբար, ինչպե՞ս զարգացնել հայերենը եւ ինչպէս զայն մատուցանել, նաեւ ինչպէս ապահովել անոր ընկալումը եւ օգտագործումը: Իսկ յաջողութեան համար պարտինք ներկայացնել Հայը, Հայրենիքը, Հայերենը որպէս հարուստ եւ մեզ ապահովող եւ ամրացնող ժառանգութիւն եւ մեր ապագայի հզօրացման գրասկան»:

Ուսուցիչներու հարցումներէն բխած հարցերուն պատասխանելով Վերապատուելին էական գտաւ Հայ ուսուցիչներու ժամանակ անցնելը հայահոծ գաղութներու հայկական կառոյցներուն մէջ, որ կ'ամբողջացնէ անոնց վերա-



պատրաստումը որպէս Հայ ուսուցիչ: Ան նաեւ պատգամեց հայախօսութեան հարցի քննարկման օրակարգով համագումարներ կազմակերպել, special education-ը օգտագործել Հայերէնի ուսուցման համար:



Յանուն ուսուցիչներուն գնահատանքը յայտնեցին Ալեքսանտր Վարժարանի տնօրէն Պրն Մանուկ Տէմիրճեան եւ Գօլստըն Ճեմարանի Հայերէն Բաժնի պատասխանատու Տիկին Արփի Դալիթեան: Երկուքն ալ հաստատեցին որ միջազգայնացումէ, համաշխարհայնացումէ փախչիլն անհնար է եւ պէտք է օգտագործել անոնց ընձեռած առիթները յօգուտ Հայերէնի ուսուցման:

Իրենց շնորհակալական խօսքն ու

Սրբազան հօր գնահատանքի, ուսուցչական տօնի շնորհատրանքի եւ շնորհակալութեան խօսքով եւ ապա՝ Պահպանիչով աւարտեցաւ այս անկլինադարձային կարեւորութիւն ներկայացնող դասախօսական ձեռնարկը:



Կիր. 22 Հոկտեմբեր – Ս. Պատարագէն ետք, Սրբազան հայրը, ընկերակցութեամբ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, այցելեց երիտասարդներուն Փիքնիքին, միացեալ կազմակերպութեամբ ACYA-ի եւ ՀԲԸՄ-ի երիտասարդականին: Սրբազանը քաջալերեց ամենամեայ աւանդութիւն դարձած այս փիքնիքը, որ առիթ կ'ընծայէ երիտասարդութեան յարաբերութեանց զարգացման: Սրբազանը բաշխեց իր օրհնութիւնը:

քննարկուեցաւ Նոյ 12-ի դրամահաւաքի տարեկան ձեռնարկը, որ է համերգ հայրենի երգիչ Գուրգէն Տապաղեանի կողմէ:

Բշ., 23 Հոկտեմբեր – Սրբազանը նախագահեց Հայաստան Համահայկական Հիմնադրամի Աւտօրալիոյ մասնաճիւղի հերթական ժողովին, ուր

Դշ., 25 Հոկտեմբեր – Այս ամսավերջի լսարանական 25րդ առցանց դասախօսն էր Բարձրաշնորհ Տէր Հայկազուն Արք. Նաճարեան, նիւթ՝ «Արցախն այսպէ՞ս պիտի ըլլար...»:

Հանդիսավար Նշան Պասմաճեան վերաթարմացուց ունկնդիրներուն Սրբազան հօր կենսագրութիւնը, որ ասկէ առաջ հրապարակած ենք Փարոսի զանազան թիւերուն մէջ:

Սրբազան հայրը պատմական ակնարկ մը նետեց Արցախի պատմութեան վրայ, սկսելով Ե. դարուն Մեսրոպ Մաշտոցի Ամարասի Վանքին մէջ ուսումնարանի հիմնումէն, անցնելով արաբական շրջանին



անոր տրուած ինքնավարութեան, ապա թաթարական արշաւանքներ, Լէնկ Թիմուր, դաշտային Ղարաբաղի պարպում եւ ապաստան լեռնային շրջաններ: Սրբազանը խօսեցաւ Խամսայի Մելիքութիւններուն, Էջմիածնի գաղտնի ժողովին, Հայ ազատագրական շարժումի ռահվիրայ Իսրայէլ Օրիի առաքելութեան, Դաւիթ Բէկի ազատագրական զինեալ պայքարին եւ այդ դարերէն մինչեւ օրս Ռուս պետութեան նենգ հակահայ Վարանդայի իշխանին թաթարներու

քաղաքականութեան մասին: Սրբազանը անդրադարձաւ նաեւ հետ գործակցութեան մասին ընդդէմ միւս չորս մելիքութիւններուն եւ Շուշիի բերդը թաթարին յանձնելուն պատմական իրականութեան: Սրբազանը բացատրեց 1805 թուականին Արցախի Ռուսական տիրապետութեան տակ ինչպէս անցնիլը եւ անոր Ռուսական մարզի վերածուիլը: Սրբազանը զգուշացուց որ այն օրերուն հայութիւնը համոզուած էր որ քրիստոնէայ Ռուսաստանը պիտի փրկէր մեզ եւ մեզի անկախ պետութիւն պիտի «շնորհէր»: Այսօր ալ նոյն բանին հաւատք ընծայողներ եւ յուսացողներ կան: Այդ մէկը երազ է ըսաւ Սրբազանը եւ չառնչուիլ իրականութեան հետ: Ռուսաստանը 19րդ դարուն «տաք ջուրեր» հասնելու նպատակ ունէր եւ իր շահերով ու նպատակներով կ'առաջնորդուէր: Այսօր ալ իր շահերը ունի շրջանին մէջ: Սրբազանը նաեւ դիւանագիտութեան մէջ մեր խակ ըլլալը բացատրեց, օրինակ տալով Անդրանիկ Զօրավարի դէպի Արցախ արշաւած ատեն Գորիսի մէջ հանդիպիլը Անգլիացի զինուորականի մը եւ հաւատք ընծայելը անոր սին խոստումներուն մեր հարցի լուծման ի նպաստ: Անդրանիկ պետք չէր հաւատար անգլիական այդ սուտ խոստումներուն եւ պետք էր շարունակէր ու ազատագրէր Արցախը: Սակայն դիւանագիտութեան արուեստին չտիրապետելուն պատճառով առիթը փախաւ: «Այսօր պատմութիւնը տարբեր կ'ըլլար...» բացատրեց Սրբազանը:



Պատմութեան ընթացքին Ռուսերը, ապա սովետները, հիմա դարձեալ Ռուսերը միշտ փորձած են հայն ու ազերին իրարու դէմ հանել, որպէսզի իրենց ներկայութիւնը Անդրկովկասի մէջ արդարանայ որպէս վերահսկող եւ խաղաղապահ: Իրենց դրդումով Նախիջեւանը հայաթափուեցաւ, իրենց դրդումով նաեւ Արցախի եւ Հայաստանի միջեւ սահմանները կտրուեցան 1921 թուականին, որպէսզի, որպէս անքլավ, Արցախը մնայ Ատրպէյճանի տիրապետութեան տակ:

Անդրադառնալով Թուրքիոյ խաղաղացած դերին՝ Սրբազանը ըսաւ որ «Ղարաբաղի խնդիրը Թուրքիոյ խնդիրն է»: Թուրքիոյ նպատակն է հասնիլ Արեւելքի մէջ թուրք իր ազգակիցներուն, մինչեւ Մոնկոլիա: Այս ծրագրին խոչնդոտներն են Արցախն ու Հայաստանը: Այսօր Արցախի կորուստով վտանգուած է նաեւ Հայաստանը: Այսօր որ Արցախը լրիւ յանձնուած է Ազերիին, ինչո՞ւ տակաւին Ռուս զօրքերը կը մնան Արցախ: Ըստ Սրբազան հօր եւ այլ վերլուծողներու անոնք կրնան հոն ըլլալ մօտիկ ապագային Միւնիքը գրաւելու նպատակով: Կնճռոտ է մեր իրավիճակը: Սրբազանը հետեւեալ հաստատումները կատարեց.

- Արցախը պատմականօրէն հայկական եղած է ըստ վերոնշեալ պատմական փաստերուն
- Մեր անցեալի թէ վերջին 30 տարիներու իշխանաւորները դիւանագիտական հասունութիւն չեն

ունեցած եւ աւելի զբաղած են իրենց անձերը պարարտացնելու աշխատանքով քան հայրենասիրական ծրագիրներով, ինչպէս զօրաւոր բանակի ստեղծում, խաղաղութեան կնքում Ատրպէյճանի հետ երբ ան պարտուած էր, եւ այլն:

- Մենք զմեզ Ռուսաստանէն կախեալ պահելը, ապահովական, ռազմական թէ տնտեսական մարզերէ ներս:
- Այսօրուան իշխանաւորները կարծեցին որ Արցախը յանձնելով խաղաղութիւնը կու գայ Հայաստանի համար: Չհասկցան թէ միայն զենքով է հայուն փրկութիւնը: Ուժի ապահովումը կ'ապահովէ խաղաղութիւն:
- Մայրաքաղաք Երեւանի մէջ ժողովրդային անտարբերութիւն կայ: Մարդոց, նոյնիսկ իշխանաւորներու փոյթը չէ թէ սահմանի վրայ ինչ կ'անցնի կը դառնայ: Մա ընդունելի բան չէ:
- Մենք առանց կռիւի հող չենք կրնար պահել, որովհետեւ մեզ շրջապատողները միայն ուժէն է որ կը հասկնան: Ուրեմն՝ պէտք է պատրաստ ըլլալ նոր պատերազմի:
- Եթէ մենք զմեզ լուրջի չառնենք, ուրիշը մեզ լուրջի չառներ, եւ ինչո՞ւ սպասել որ մեզ որպէս այդպիսին ընդունին:
- Պատմութիւնը ցոյց տուած է որ երբ Ռուսն ու Թուրքը իրարու կը բարեկամանան՝ Հայն է որ կը տուժէ: Որովհետեւ, այսպէս ասած Ռուս բարեկամ պետութիւնը Թուրքիոյ բարեկամութիւնը ապահովելու համար մեր երկրէն է որ բան մը կը զիջի, ոչ թէ ինքն իրմէ:
- Եթէ 500000 հայեր հաստատուած եւ բնակած ըլլային Արցախի մէջ, անոր իրավիճակը չէր ըլլար այն ինչ որ է այսօր:
- Այսօր հրամայական է բռնագաղթած արցախահայութիւնը պահպանել ոչ միայն սնունդով այլ կենցաղային բոլոր պայմանները ստեղծելով որ չարտագաղթէ: Առաւել՝ պէտք է Արցախ երկրի պահանջատիրութիւնը վառ պահուի արցախցիին եւ բոլոր հայութեան մէջ ի Հայաստան եւ ի սփիւռս: Ճիշդ է որ Սփիւռքը միատարր չէ սակայն Արցախի հարցին մէջ բոլորս մէկ նպատակ պիտի հետապնդենք եւ միաձայն աշխատինք:
- Ամբողջ Հայաստանը եթէ զբաւուի, ոչ մէկ ազգ մատը չի շարժեր: Ատոր համար ուժն է որ կը խօսի եւ այդ է մեզի պէտք:
- Ղեկավարութիւն մը եթէ օրինակ չէ՝ այդ կարելի չէ ընդունիլ ղեկավարութիւն: Դժբախտաբար, անկախութենէն մինչեւ այսօր այդպիսի տիպար ղեկավարութիւն չունեցանք եւ չունինք: Տիպար ղեկավարի պակասը ժողովուրդին մէջ յոյսը կը մեռցնէ:
- Կառավարութիւնները գնայուն են իսկ Կաթողիկոսը մնայուն է: Կաթողիկոսը, եկեղեցին, առանց քաղաքականութեան միջամուխ դառնալու պարտաւոր են, յօգուտ արդարութեան եւ ժողովուրդին քննադատելու եւ ձայն բարձրացնելու: Իշխանութեան համար այս հասկացողութիւնը յոռի կը թուի ըլլալ, իսկ մեր կրօնքը ազգային կրօնք է, հետաւբար եկեղեցին իր ազգային պարտականութիւնը պիտի կատարէ ինչ ալ ըլլան եւ որմէ որ ցցուին իր առջեւ բարձրացած խոչնդոտները:
- Չարենցի «Ով Հայ ժողովուրդ քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժին մէջ է» լոզունգը իրականութիւն կը դառնայ երբ մեր երկրին պետութիւնը երկիրը կը պաշտպանէ: «Թաւշեայ» գաղափարներով ազգային հարցեր չեն լուծուիր, եզրակացուց Սրբազանը:



Մէկուկէս ժամ տեւած այս ձեռնարկի ընթացքին Սրբազանը պատասխան տուաւ ուղղուած բոլոր հարցումներուն, որոնք ներառած ենք Սրբազան հօր վերի հաստատումներուն մէջ:

Գ2., 31 Հոկտեմբեր – Սրբազան հայրը նախագահեց թեմական հերթական ժողովին:

ԷՔԻԻՄԷՆԻՔ Լուրեր




Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Աւստրալիոյ եւ ՆԶ-ի Հայոց թեմը վաղուց անդամ է Աւստրալիոյ Եկեղեցիներու ազգային Խորհուրդին (NCCA), որուն 1994-1997-ի նախագահն էր հոգեւոյս Ադան Արք. Պալիօզեանը:

(NCCA)-ը կը գումարէ Ազգային Եկեղեցիներու Ղեկավարներու տարեկան 3 ժողովներ, որուն վերջինը տեղի ունեցաւ առցանց, 18 Հոկտեմբեր 2023-ին: 18 եկեղեցիներ անդամ են սակայն 6 ղեկավարներու փոքր խումբ մը հաւաքուեցաւ: Ժողովը վարեցին (NCCA)-ի նախագահ Ճոն Կիլմոր քահանան եւ ընդհանուր քարտուղարուհի՝ Էլիզապէթ Սթօնը:

Ժողովը տեղի ունեցաւ Voice Referendum-ի շարաքավերջին յետոյ

եւ Համաս-Իսրայէլ հակամարտութենէն ետք: Այդ առիթով, Ճոն Կիլմոր ժողովը սկսաւ խորհրդածելով Պօղոս Առաքելի Հռովմեացիներու գրուած նամակէն, գլուխ 12:9 «Մէրը ըլլայ առանց կեղծաւորութեան» եւ 12:19 «Վրէժխնդրութիւն մի ընէք ձեր անձերուն համար եւ տեղի տուէք բարկութեան»: Ան բացատրեց թէ այս գրութիւնը ցոյց կու տայ թէ որքան Քրիստոս պէտք է զօրաւոր ներկայութիւն ըլլայ հիմա Սուրբ Երկրին մէջ, Իսրայէլի եւ Պաղեստինի մէջ, ինչպէս նաեւ Աւստրալիոյ Առաջին Ժողովուրդին մէջ, որոնք բոլորը ցաւի մէջ են, իւրաքանչիւրը իր պայմաններուն համեմատ:



Խօսուեցաւ հանրաքուէին մասին: Յստակ է հիմա որ բնիկ Աւստրալացի ժողովուրդը ԱՅՈ քուէարկեց: Ժողովականներէն մին հարց տուաւ «Ի՞նչ կը նշանակէ եկեղեցիներուն համար ԱՅՈ ըսել երբ երկիրը ՈՉ քուէարկեց»: NCCA-ը պիտի հաւաքէ իր անդամ եկեղեցիներու բնիկներու ղեկավարները խորհրդակցութեան եւ խորհրդածութեան եւ իր ուղղութիւնը տայ անդամ եկեղեցիներուն թէ «միասին քալել» ինչ պէտք է նշանակէ այսօրուան կացութեան մէջ:

Իւրաքանչիւր ժողովական արտայայտուեցաւ Համասի յարձակման որուն ի հետեւանք Կազան կը քանդուի եւ մեծ թիւով քաղաքացիներ գոհ կ'երթան Իսրայէլեան յարձակումներուն: Ժողովականները իրենց մտահոգութիւնը յայտնեցին մետիայի սխալ տեղեկատուութեան եւ կողմերուն ոչ պատրաստակամ կեցուածքի պակասին մասին պաշտպանելու համար քաղաքացիները եւ ենթակառոյցները, ինչպէս նաեւ տասնեակ տարիներու տեղի ունեցած անարդարութեան ճանաչման մերժումին մասին:

NCCA- հաղորդագրութեան մը սեւագրութիւնը պատրաստեց Կազայի մէջ տիրող կացութեան մասին, մանաւանդ որ անդամ եկեղեցիներ գործընկերներ ունին այնտեղ, որոնք իրենց ծառայութիւնը կը մատուցեն համայնքներու եւ առողջապահական հաստատութիւններու: Հաղորդագրութիւնը եկեղեցիներու կողմէ կոչ է փոխադարձ յարգանքի եւ ինքնազսպումի: Անկէ օրինակ մը ուղարկուեցաւ խորհրդարաններու անդամներուն եւ ծերակուտականներուն:

Ժողովին ներկայացաւ Պրն Տէվլիտ Պարլէթ, Բիզոլվ ընկերութենէն, որ հարցախոյզ մը պատրաստած է NCCA-ին համար, պատրաստելու համար Ազգային Ֆօրումը, որ պիտի գումարուի 2024-ի Յունիսին: Անդամ եկեղեցիներու պատասխանատուներուն ուղղուած հարցախոյզը կը վերաբերի կարեւոր թեմաներու, որոնք ուղեցոյց կրնան հանդիսանալ NCCA-ի հետագայ գործունէութեան: Յատկապէս հարց է որ ինչ հիմնական առիթներ կան որ եկեղեցիները միասնաբար աւելի լաւ գործեն: Ինչպէ՞ս միասնական աշխատանք տանիլ օրէ օր աւելի աշխարհիկ դարձող մարդկային ընկերութեան մէջ:

Ժողովը հակիրճ զեկուցում լսեց Նշան Մարկուազ Պասմաճեանէն Արցախէն բռնի Հայաստան տեղահանուած 100000-120000 հայերուն մասին: Ժողովը տեղեկացաւ որ այս մարդասիրական մեծ

աղետ մըն էր եւ մեծ բեռ Հայաստանի նման փոքր երկրի մը համար: Եւս առաւել, Քրիստոնէայ եւ հայ մշակութային եւ հոգեւոր ժառանգութիւնը Լեռնային Ղարաբաղի մէջ կը փճացուի եւ պիտի շարունակուի փճացուիլ Ատրպէյճանի կողմէ: Այլ աւելի մեծ հարց է բռնագաղթածները իրենց տուները ապահով վերադարձնելը, որուն համար կառավարութիւններ եւ եկեղեցական հաստատութիւններ պէտք է ճնշում բանեցնեն Ազրպէյճանի վրայ:

Ղպտի ուղղափառ եկեղեցւոյ հոգեւոր Առաջնորդ Տանիէլ Եպիսկոպոս նաեւ զեկուցեց բռնագաղթի ենթարկուած ղպտի բնակչութեան Սուտանի մէջ, ուր մայրաքաղաք Խարթումի ղպտիներու թիւը 10 տոկոսի իջած է: Մէկ միլիոն ժողովուրդի Կազայի հիւսիսէն տեղափոխուիլն ալ ղէպի եգիպտական սահման այլ մեծ խնդիր է:

Ժողովը փակուեցաւ այն խորհրդածութեամբ որ Աւստրալիոյ նման երկրի մը մէջ ապրիլը մեծ բարեբախտութիւն է եւ պէտք է փառք տալ Աստուծոյ եւ յարգը գիտնալ այս երկրին շնորհած բարիքներուն եւ Աստուծոյ սիրոյն:

Էքիւմենիք Ընթրիք

Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Էսկարեան Արահին Մէջ Երկուշաբթի 23 Հոկտեմբեր 2023-ին



Երկուշաբթի 23 Հոկտեմբերի երեկոյեան, արտօնութեամբ Բարձր. Տէր Հայկազուն Արք Նաճարեանի եւ աջակցութեամբ Նշան Սարկաւազ Պասմաճեանի, NSW Ecumenical Council (NSWEC) եւ Ecumenical Wellspring Community (EWC) միասնաբար կազմակերպեցին էքիւմենիք ընթրիք մը եւ գաղափարներու

փոխանակման երեկոյ մը, Սուրբ Յարութիւն Եկեղեցւոյ Էսկարեան սրահին մէջ, նիւթ՝ ‘Care for Creation: The Spiritual Context’:

Յիշատակելի այս հաւաքին մասնակցեցան 50 հաւատացեալներ: Աւետիս Քահանայ Համբարձումեանի տնօրինութեամբ հրամցուեցան հայկական համադամ կերակուրներ: Տէր հայրը կատարեց սեղանին օրհնութիւնը: Ուիս Շուիթիկա, Society of Friends – Quakers-էն եւ փոխնախագահ (NSWEC), կատարեց հանդիսավարութիւնը: Մեծ պատիւ էր մեր մէջ ունենալ (NSWEC)-ի նորընտիր նախագահ Յոյն Ուղղափառ եկեղեցւոյ հոգեւորական Անասթասիոս Պօզիքիս քահանայ հայրը:

Ձեռնարկը մէկն էր այն ժողովներէն եւ հաւաքներէն,



որոնք մաս կը կազմեն ուխտագնացութեան ծրագրի մը, եւ որ տեղի կ'ունենայ Աւստրալիոյ տարածքին մէջ, նախաձեռնուած Սկովտիոյ Iona Community-ի նախագահ Բուր շարվի (Quaker) հոգեւորականին կողմէ, հրաւերովը՝ (EWC)-ի: Բուրի կ'ընկերանայ իր ամուսինը Նիք Օսթինը, Լիզա Ուայրլին, եւ Աւստրալիոյ Առաջին Ժողովուրդի քրիստոնէայ ղեկավար եւ դաստիարակ Պրուք Փրէնթիսը: Երկուքն ալ խօսք առին հաւաքի ընթացքին: Լիզան բացատրութիւն տուաւ իր ուխտաւորի փորձառութեանց մասին իսկ (EWC)-ի փոխնախագահ Ճոյ Քոնրը վարեց զանազան խումբերու միջեւ մրցոյթ մը, թեմա ունենալով գործնական ի՞նչ ձեւերով կարելի է հոգատար դառնալ ստեղծագործութեան (care of creation):



Ընթրիքէն ետք խօսք առին Բուր շարվին եւ Դոկտ Բէյ Մինիէքոն անկլիքան ապօրիճինըլ քահանան: Վերջինս խօսեցաւ եկեղեցիներու դերին մասին ստեղծագործութեան խնամքին մէջ: Բուր խօսեցաւ այս ուխտագնացութեան ընթացքին կլիմայական խնդիրներու մասին իր ձեռք ձգած փորձառութեան մասին: Ապա խօսք առաւ Պրուք Փրէնթիս եւ կատարեց զօրաւոր դիտարկումներ: Երեկոն աւարտեցաւ Բէյ Մինիէքոնի աղօթքով:

Հայ Առաքելական Եկեղեցոյ Էքիմենիք զօրաւոր ոգին աւելի եւս իմաստաւորեց այս ձեռնարկը, առաջինը, որ NSWEC-ը կը կազմակերպէ EWC-ի հետ, եւ որուն մասնակցեցան մեծ թիւով բարեկամներ, տարբեր եկեղեցիներէ: Աշխարհը կը դիմագրաւէ կլիմայական տագնապ: Տագնապի մէջ են նաեւ Աւստրալիոյ Ապօրիճինի ժողովուրդները, ինչպէս նաեւ Հայ ժողովուրդը: Հետեւաբար մեծ է կարեւորութիւնը քրիստոնէական շօշափելի միասնականութեան եւ զօրակցութիւնը:

Փրոֆ Տայան Սփիտ AM
 Convenor, Theological Reflection Commission, NSW Ecumenical Council
 Deputy Leader, Wellspring Community

Խօսք Երախտագիտութեան

Փարոսի խմբագրութեան ժրաջան, հաւատարիմ եւ պարտաճանաչ անդամուհի Տիկին Լենա Նազարեանը, բազմազբաղուածութեան պատճառով, Հոկտեմբեր 1-էն ի վեր մաս չի կազմեր խմբագրութեան: Ոչ ոք ուրախ է: Ինչպէ՞ս կարելի է ուրախանալ երբ «ամէն նազ տանող» տիկին Լենան կը դադրի իր ներդրումը բերելէն:

Բայց պարկեշտութեան մարմնացումն է Տիկին Լենան եւ ինքզինք լաւ կը ճանչնայ: Երբ կը զգայ որ իր ստանձնած պարտականութիւնը հարիւր առ հարիւր պիտի չկարենայ ընել՝ ապա կը նախընտրէ պարկեշտօրէն պարզել իրողութիւնը:

Փարոսի Հայերէն գրութիւնները Անգլերէնի թարգմանիչն էր Տիկին Լենան, բժախնդիր եւ հոգատար: Երկու ամիս առաջ տեղեակ պահեց որ ականայ պիտի թողու իր կամաւորի աշխատանքը, որուն արդիւնքը վայելած են Փարոսի անգլիատառ բաժինը ընթերցողները:

Միրելի տիկնոջ առողջութիւն եւ ուժ ու կորով կը մաղթենք եւ համբերութիւն, կարենալ յաղթահարելու համար իր բազում պարտականութեանց մարտահրաւերները: Կ'աղօթենք, որ իր ունեցած հաւատքին եւ իր բարի սրտին համեմատ Աստուած զինք վարձահատոյց ընէ:

Փարոսի խմբագրութիւնը միշտ երախտապարտ պիտի մնայ ձեզի աննման Տիկին Լենա:

Փարոսի Խմբագրական Կազմ

Լուրեր Ծուխերէն

Ուէնթուրթովիլ - ՄԻՏՆԻ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցի

Կիր., 1 Հոկտեմբերին, յընթացս Պատարագին տեղի ունեցաւ աղօթք Արցախի եւ արցախահայութեան համար:

Ուրբ., 6 Հոկտեմբեր – Գրադարան մը զետեղուեցաւ եկեղեցոյ մէջ, ընդհանրապէս հայերէն գիրքերով, կրօնի, պատմութեան, գրականութեան, երաժշտութեան եւ Յեղասպանութեան վերաբերող, առ ի գործածութիւն հաւատացեալներուն կողմէ:



Շբ., 7 Հոկտեմբերին, Տիկնանց Յանձնախումբը կազմակերպեց ուխտագնացութիւն դէպի Ս. Շնուտա Վանք, ուր Տէր Միւռն կատարեց ջօրօհներ: Վանահայր Անպա Տանիէլ կատարեց շատ հետաքրքրական Սուրբ Գրոց սերտողութիւն: Խումբին տրուեցաւ բացատրութիւն վանքի պատմութեան մասին վանքի վարդապետներէն մէկուն կողմէ:

Կիր., 8 Հոկտեմբերի Պատարագէն ետք, Տէր Միւռն եւ ներկայ հաւատացեալները հաւաքուեցան եկեղեցոյ ետեւի բակը օրհնելու համար այն պահեստի տնակը որ կառուցուած էր ողբացեալ Արամայիս Աւետիսեանի կողմէ: Տնակը անուանուեցաւ "Aramayis's Shed", սոյն գրութիւնը ամրացուեցաւ տնակին վրայ հանգուցեալին քառասունքին օրը ի յիշատակ իր վաստակին:

Յաւարտ Սուրբ Պատարագին հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Քարէն Եփփէ Ճեմարանի հիմնադիրներուն եւ նահատակներուն հոգիներուն, խնդրանքովը Ճեմարանի Շրջանաւարտից Միութեան Սիտնիի Մասնաճիւղի վարչութեան:

Հաւատացեալները հաւաքուեցան Պաթմանեան սրահ, ուր ներկայացուեցաւ գեղարուեստական յայտագիր մը թատերական, երգի եւ պարի ներկայացումներու, կատարողութեամբ եկեղեցոյ Կիրակնօրեայ վարժարանի աշակերտներուն, Թարգմանչաց Տօնին առիթով: Տիկին Վարդենի Խուտեցեան ներկաները իրազեկեց Թարգմանչաց Տօնին մասին:

Պատարագի ընթացքին, Տէր Միւռն նաեւ օրհնեց հանրակառքի նուիրատուները:




Եջ., 12 Հոկտեմբերին սկսան ՆԱՓԼԱՆ-ի դասընթացքները Պաթմանեան սրահին մէջ Տիկին Սարինէ Պասմաճեանի կողմէ: Դասաւանդութիւնը պիտի շարունակուի ամէն Հինգշաբթի կ.ե. ժամը 5.30-ին:

Կիր., 15 Հոկտեմբերին Տէր Միւռնոն ներկայ եղաւ Տիկին Զարուհի Մանուկեանի Ոգեղէն Պայքար գիրքի Շնորհահանդէսին:



Բջ., 16 Հոկտեմբերին Տէր Միւռնոն այցելեց Բարեկեցութեան Կեդրոնի արեւմտեան Միտնիի մասնաճիւղի մեծահասակ հայրիկներուն ու մայրիկներուն, որոնք հաւաքուած Պաթմանեան սրահին մէջ բացատրութիւն ստացան խորանի վրայ գործածուող առարկաներու մասին, Տէր հայրը երգեց հոգեւոր երգ մը ապա օրհնեց ճաշը եւ անոնց ճաշի հիւրը եղաւ: Նախքան մեկնում մեծահասակները Տէր հօրմէն ստացան Երուսաղէմէն բերուած օրհնուած խաչիկներ:

Կիր., 22 Հոկտեմբերին Տէր Միւռնոն եւ Կիրակնօրեայ վարժարանի ուսուցիչները մասնակցեցան առցանց դասախօսութեան մը Հայկազեան Համալսարանի նախագահ Վերապատուելի Փօլ Հայտոսթեանի կողմէ, Հայեցի կրթութեան միաջազգայնացումի վտանգէն խուսափելու մասին



Դջ., 25 Հոկտեմբերին Ս. Գրոց սերտողութեան խումբը մասնակցեցաւ առցանց Լսարանական դասախօսութեան տրուած Բարձր. Տէր Հայկազուն Արք. Նաճարեանի կողմէ, նիւթ՝ «Արցախը այսպէ՛ս պիտի ըլլար»: Ապա խումբը շարունակեց Ս. Գրոց սերտողութիւնը:

Մարի Զլէր Թորոսեան

Օրլանտ, ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱ

ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրահանգով, Հոկտեմբեր 1-ին, Արցախի համար աղօթք տեղի ունեցաւ Հայաստանեայց Առաքելական բոլոր եկեղեցիներուն մէջ, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի: Կարգ մը պատճառներով Օրլանտի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ ծխական խորհուրդը չկարողացաւ նոյն օրը կազմակերպել աղօթքը, սակայն անոր փոխարէն կազմակերպեց երկու աղօթքի հաւաքներ, մին՝ հայկական շրջանակի մէջ միւսը՝ էթիւմէնիք:



Այսպէս, **Կիրակի 22 Հոկտեմբերի** առաւօտուն, Մէտոնուտի համայնքային կեդրոնին մէջ, ներկայութեամբ 30-ի շուրջ հաւատացեալներու, տեղի ունեցաւ աղօթք, ղեկավարութեամբ Նշան Մարկաւազ Պասմաճեանի, մասնակցութեամբ Մարկոս Մարկաւազ Իսկէնտերեանի եւ Զուարթնոց երգչախումբի անդամուհիներուն: Հետեւելով Միտնիի Սուրբ Յարութիւն Եկեղեցոյ աղօթակարգին, պատրաստուած էր յատուկ աղօթագիրք, որպէսզի համայնքի գաւակները, առաւելագոյն թիւով կարենային մասնակից դառնալ աղօթքներու ընթերցումին: Այսպիսով, հերթով աղօթք կարդացին դպրուհիներ Անի Եաղուպեան, Նարինէ Գրիգորեան, Անգիսէ Երլտրզեան, Ռոզ Անտրէա, Գոհար Սարգսեան, Ալին Մանուկեան, Մարի Երլտրզեան, Տայիսիա Գրիգորեան, Գայանէ Սարգսեան,

Լուիզա Գրիգորեան, Հետի Օվանեսօֆ, Ռիթա Անտրեա: Մարկոս Սարկաւազ



Անահիտ Սարգսեան, մենակատարեց Գթա Տէրը: Նշան Սարկաւազ պատգամեց մեր սրտերուն մէջ պահել Արցախը եւ վճռական յուսալ անոր Հայ ազգին վերադարձին:



Կոկիկ եւ տպաւորիչ այս հաւաքը ուխտի վերանորոգման առիթ հանդիսացաւ ներկաներուն:

Արցախի նուիրուած Էքիւմէնիք աղօթքը տեղի ունեցաւ Կիրակի **29 Հոկտեմբերի** երեկոյեան Օքլանտի Սուրբ Երրորդութիւն Տաճարին մէջ (Holy Trinity Anglican Cathedral), միացեալ կազմակերպութեամբ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ Ծխական Խորհուրդին եւ Անկլիքան Տաճարի տնօրէնութեան յանձինս Տաճարի Տնօրէնուհի Տիկին Անն Միլս (Dean Ann Mills) եւ ընդհանուր արարողակարգի պատասխանատու Իվիցա Կրեկուրէք վարդապետին (Reverend Ivica Gregurec):

Արարողութեան հրաւիրուած եւ ներկայ էին Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Սիրիաք Ուղղափառ Եկեղեցոյ առաջնորդ Մօր Մալաթիւս Մալքի Մալքի Արքեպիսկոպոսը (Mor Malatius Malki Malki, Archbishop, Patriarchal Vicar of Australia and NZ, Syriac Orthodox Church), Սուրիական Յակոբիկեան Եկեղեցոյ հոգեւոր հովիւ Դոկտ. Ճոզէֆ Քահանայ Մարամքանտամը (Reverend Dr Joseph Zachariah Maramkandam, Cor Episcopa St Peter's Jacobite Syrian Orthodox Church), Մէլքայթ կաթողիկ Եկեղեցոյ հոգեւոր հովիւ Ժան Փօլ Ապու Նաում վարդապետը (Reverend Father Jean Paul Abou Naoum, Parish Priest Melkite Catholic Church):

Աղօթակարգը մշակուած էր Իվիցա Վարդապետին եւ Նշան Սրկ Պասամաճեանի կողմէ:

Որոշուած ժամուն, Թափօրը հանգամանօրէն մտաւ եկեղեցի եւ իրաքանչիւր պատասխանատու գրաւեց իր աթոռը, որմէ ետք Անն Միլս բարի գալուստ մաղթեց բոլոր ներկաներուն, եւ հրաւիրեց զանոնք սրտաբուխ եւ անկեղծ աղօթք բարձրացնելու Հայաստանի խաղաղութեան եւ Արցախի ու բռնի տեղահանուած Արցախահայերուն համար:

Արարողութեան առաջին 20 վայրկեանը տրամադրուած էր Անկլիքան ծեսին, որ քառաձայն գեղեցիկ երգեցողութեամբ եւ աղօթքներով ընթացաւ ըստ արարողակարգին: Այդ ընթացքին կարդացուեցան երկու դասեր (lessons), առաջինը՝ Հին Կտակարանէն (Եսաեայ Մարգարէ 5:1-5) Տիկին Փամ Բոզի կողմէ, իսկ երկրորդը՝ Հայերէնով, Տիկին Մալքի Ելլտըզեանի կողմէ, Նոր Կտակարանէն (Յովհաննու 14:25-31):



Ապա խօսք առաւ Իվիցա Վարդապետը, որ բացատրութիւն տուաւ թէ ինչ ահաւոր վիճակ կը տիրէր Արցախի Հայ բնակչութեան համար, որ բռնի տեղահանուած էր Ատրպէյճանի կողմէ: Վարդապետը իր շնորհակալութիւնը յայտնեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ Ծխական Խորհուրդին եւ Նշան Սարկաւազին քիչ ժամանակի ընթացքին կազմակերպելու այս հոյակապ էփիմէնիք միջոցառումը, որուն կը մասնակցին 5 տարբեր եկեղեցիներ: Ան մեծապէս գնահատեց Մալքի Մալքի Արքեպիսկոպոսին ներկայութիւնը, որ Սիտնիէն ժամանած էր իր հօտին այցելութիւն տալու եւ որ չմերժեց ծիսակատարութեան մասնակցիլ, ինչպէս նաեւ Ճօզէֆ քահանային եւ Ժան Փօլ վարդապետին: Իր խօսքէն անմիջապէս ետք Իվիցա վարդապետ, ընկերակցութեամբ Օրկանիսթ Դոկտ Ֆիլիփ Սմիթի, կատարեց Սուրբ Սուրբ սօլօն գոր ամբողջացուց (Սուրբ Տէր գօրութեանց...) Զուարթնոց երգչախումբը իր դիւթիչ եւ ներդաշնակ երգեցողութեամբ, ղեկավարութեամբ Նշան Սարկաւազին:

Արցախի եւ Հայաստանի խաղաղութեան համար յատուկ աղօթքներ պատրաստուած էին որոնք կարդացուեցան Ժան Փօլ վարդապետին (արաբերէն), Ճօզէֆ Քահանային (Անգլերէն), Մալքի Մալքի Արքեպիսկոպոսին (Անգլերէն), Նշան Սարկաւազի (Հայերէն) կողմէ:



Իվիցա վարդապետ հրաւիրեց բոլոր ներկաները շրջապտոյտ մը կատարելու Սուրբ Երրորդութիւն եւ կից Սուրբ Աստուածածին տաճարները, տալով մանրամասն բացատրութիւն, մեծ հետաքրքրութիւն ստեղծելով մասնակիցներուն մօտ:

Խանդավառուած ձեռնարկի յաջողութենէն, Անն Միլս Քահանան առաջարկեց այսպիսի էփիմէնիք աղօթքներու կազմակերպումը պատահականութեան չթողուլ եւ հանդիպումները կատարել պարբերաբար:

Թղթակից

Անգամ մը եւս Զուարթնոց երգչախումբը, առանց Օրկի ընկերակցութեան, կատարեց Տէր Ողորմեան: Նախքան «Երթայք Խաղաղութեամբ», գոր Ասորբէնով կատարեց Մալքի Արքեպիսկոպոսը, ներկայ բոլոր հայ հաւատացեալները հայերէնով արտասանեցին Տէրունական աղօթքը:

Անմիջապէս ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն կերակուրները ապահովուած էին տիկիներու յանձնախումբին կողմէ:





ԼՈՒՐԵՐ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԷՆ

ԱՂՕԹՔ

Ի ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԱՐՅԱՆԻ և ԱՐՅԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ

Հոկտեմբեր 1-ին՝ Արցախի համար համազգային աղօթքի օրը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Երկրորդ Ծայրագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Տրդատի բաց խորանին վրայ, Պատարագէն ետք, կատարուեցաւ աղօթքի յատուկ կարգ՝ ի գորակցութիւն Արցախի և արցախահայութեան:

Այս առիթով դուրս բերուեցաւ Աստուածամուխ Սուրբ Գեղարդը, որով Վեհափառը օրհնեց Հայաստան ու Արցախ աշխարհները:

Աւարտին, Վեհափառը յղեց իր ուղերձը ըսելով. (հատուածներ)

«Միրելի բարեպաշտ ժողովուրդ, Անսահման ցաւով և խոր մտահոգութեամբ են համակուած բոլորիս հոգիները: Հայաթափում է Արցախ աշխարհը, վերստին որբանում սրբազան հողը հայոց:

Ցաւօք, Ատրպէյճանի ցեղասպանական գործողութիւնները, Արցախի նկատմամբ Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնների որդեգրած քաղաքականութիւնը և մեր ժողովրդի երկպառակութիւնը հանգեցրեցին Արցախի կորստեանը:

Այսօր Հայաստանի Հանրապետութիւնն է նոյն սպառնալիքի առջև:

Մեր յորդորն է պետական այրերին՝ նոր բաժանարար գծերով, անկշռադատ խօսքերով ու արտայայտութիւններով ատելութիւն չսերմանել, չմասնատել և չտկարացնել ժողովրդին: Առկայ հիմնախնդիրներին արժանապատիւ հանգուցալուծում ապահովելու, հայրենիքը վտանգաշատ այս կացութիւնից դուրս բերելու համար հարկ է գործել սթափ, ճիշտ գնահատել աշխարհաքաղաքական իրողութիւնները և օրէցօր խորացող ճգնաժամի մէջ ի գործ դնել մեր ազգի փորձագիտական ողջ ներուժն ու փորձառութիւնը՝ չառաջնորդելու համար մեր երկիրը նոր կորուստների:

Մեր յորդորն ենք ուղղում նաև ազգային, կրօնական, հասարակական, քաղաքական կառոյցներին միաւորելու մեր ժողովրդին ներկայ ծանր մարտահրաւերների յանդիման և համախմբուած գործելու:



Միրելի ժողովուրդ, գոյաբանական սպառնալիքների առջև հրամայական է մեր համազգային միաբանությունն ու համախմբումը:

Արդարև, մեր հաւատը, յոյսը, հայրենասիրությունն ու ազգանուիրումը երբեք հնարաւոր չէ սպաննել: Այդ իսկ պատճառով, յանուն Արցախի համազգային աղօթքը մեզ համար անյուսութեան աղօթք չէ, այլ յոյսի ու մխիթարութեան, վերյառնումի ու յարութեան աղօթք է: Հեռացնենք մեզմէ հայրենադաերկոյթները, սրբագրենք սխալներն ու թերացումները:

Մեր հայրենեաց անգին նշխարը՝ Արցախ աշխարհը, մերն է ու մեր սրտում է, և Արցախի հայապատկան լինելու գիտակցութիւնը երբեք չի սկարանայ սերունդների մէջ:

Միրելի բարեպաշտ զաւակներ, միասնաբար աղօթենք Արցախի մեր ժողովրդի համար և ամէն կարելիութեամբ նեցուկ և սատար լինենք տարագիր մեր քոյրերին ու եղբայրներին՝ մխիթարելով իրենց ցաւի ու նեղութիւնների մէջ և իրենց կեցութեան ու կարիքների համար անհրաժեշտ հոգածութիւն ցուցաբերենք:

Արցախցի սիրելի զաւակներ, համայն մեր ժողովուրդը և Եկեղեցին ձեզ հետ են և այս տառապալի օրերին պատրաստակամ յանձնառութիւններով զօրակից ձեզ: Թող Փրկիչ մեր Տիրոջ շնորհը, սերն ու խաղաղութիւնը լինեն մեզ հետ և ամէնքի այսօր և միշտ և յաւիտեանս. Ամէն»:



**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԼԻԲԱՆԱՆԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐ
ՇԵԿՏՈՐ ՀԱՃՃԱՐԸ**

Նախարարին կ'ընկերանային Լիբանանի նախկին Երիտասարդութեան նախարար Վարդինէ Օհանեան եւ դեսպան Տիկին Մայա Տաղէրը:

Կողմերը անդրադարձան Արցախի բռնագրաւումէն ետք ստեղծուած իրավիճակին: Նախարարը ընդգծեց որ Լիբանանը անցած է նմանօրինակ մարտահրաւերներու մէջէն եւ իր այցելութեան նպատակն է ծանօթանալ բռնի տեղահանումած Հայերու ընկերային խնդիրներուն:

**ՀՈԿՏԵՄԲԵՐ 2-ԻՆ
ՎԵՀԱՓԱՌԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԱՄՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ և ԱՐԵՒՍՏԵԱՆ
ԹԵՄԵՐՈՒ ՈՒՒՏԱԻՈՐՆԵՐԸ**

Ուխտաւորներուն կ'ուղեկցէր ԱՄՆ Հայոց Արևելեան թեմի առաջնորդ Գրշ. Տ. Մեսրոպ Եպս Պարսամեանը: Անոնք ժամանած էին իրենց ուխտը նորոգելու և իրենց զօրակցութիւնը բերելու հայ ժողովուրդին: Վեհափառը գնահատեց այս ուխտագնացութեան նպատակը եւ բացատրութիւն տուաւ եկեղեցւոյ կատարած եւ կատարելիք աշխատանքներուն մասին: Ան պատգամեց ուխտաւորներուն զօրակից ըլլալ Հայաստանին եւ հայրենագրկուած արցախցիներուն:



ՀՈԿՏԵՄԲԵՐ 3-ԻՆ ՎԵՀԱՓԱՌԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՊՐԱԶԻԼԻՈՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒՒՏԱԻՈՐՆԵՐԸ

Ուխտաւորներուն կ'ուղեկցէր Պրազիլիոյ թեմի առաջնորդ Գերշ Տ. Նարեկ եպս Պերպերեանը: Ուխտաւորները այցելած են Հայաստանի տարբեր սրբավայրեր և հաղորդ դարձած հայկական հոգևոր, մշակութային ժառանգութեան: Վեհափառը գնահատեց այս ուխտագնացութեան նպատակը եւ բացատրութիւն տուաւ եկեղեցւոյ կատարած եւ կատարելիք աշխատանքներուն մասին: Ան պատգամեց ուխտաւորներուն զօրակից ըլլալ Հայաստանին եւ արցախահայրութեան:



ՄԱՅՐ ԱԹՈՒՐ ԿՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԷ ԱՐՑԱԽՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՈՒՍՈՒՄԸ ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ ՄԷՋ



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանիին տակ գործող Կալկաթայի Ճեմարանը կ'ընդունի 7-10 տարեկան արցախցի տղաք եւ աղջիկներ: Ճեմարանի ուսուցումը անգլերէնով է, բացառութեամբ «Հայոց լեզու եւ գրականութիւն», «Հայրենագիտութիւն», «Հայոց պատմութիւն» եւ «Հայ Եկեղեցւոյ պատմութիւն» նիւթերէն: Հնդկաստանի մէջ պաշտօնապէս գրանցուած եւ պետականօրէն ճանաչուած հայկական դպրոցը լաւագոյնս աշակերտներ կը պատրաստէ 10-րդ դասարանի արարտական քննութիւններուն, հետեւելով պետական կրթական ծրագրին: Ուսումը անվճար է: Դպրոցը կը հոգայ նաեւ աշակերտներու Հնդկաստան ճամբորդութեան, կեցութեան, սնունդի, հագուստի եւ բժշկական ծախսերը:

Մարդասիրական ճեմարանի 10-րդ դասարանը «լաւ» կամ «գերազանց» գնահատականներով արարտած հայ պատանիները կրնան իրենց ուսումը ևս 2 տարի անվճար շարունակել Կալկաթայի Լա Մարթինիեր անգլիական աւագ դպրոցին մէջ: Իսկ Լա Մարթինիերի 11-րդ եւ 12-րդ դասարանները «լաւ» կամ «գերազանց» գնահատականներով արարտածներուն բացառիկ հնարաւորութիւն կը տրուի իրենց ցանկութեամբ եւ ընտրութեամբ, ինչպէս նաեւ ճեմարանի տեսչութեան համաձայնութեամբ, Հնդկաստանի որեւէ բարձրագոյն ուսումնական հաստատութեան մէջ անվճար շարունակելու ուսումը, մինչեւ մագիստրոսութեան վկայական: Ուսման ընթացքին հայ ուսանողներուն կը տրուի կրթաթոշակ, ճեմարանի մէջ կեցութիւն, սնունդ, հագուստի եւ բժշկութեան ծախսեր, զորս ամբողջութեամբ կը հոգայ Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանը:

Մանրամասնութեանց համար կարելի է դիմել mayratorqdk@gmail.com, contact@armeniancollege.edu.in:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 4-ԻՆ ՎԵՀԱՓԱՌԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՅՈՒՆԱՍՍԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒՒՏԱԻՈՐՆԵՐԸ

Ուխտաւորներուն կ'ուղեկցէր թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Խորէն վարդապետ Առաքելեանը: Վեհափառը խոր գնահատանք յայտնեց այս ուխտագնացութեան համար եւ բացատրութիւն տուաւ ուխտաւորներուն եկեղեցւոյ կատարած եւ կատարելիք աշխատանքներուն մասին:



**ՀՈԿՏԵՄԲԵՐ 5-ԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԻՒՐՆԿԱԼԵՑ
ԱՆԿԼԻՔԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՔԵՆԹՐՈՂՈՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲԱԶՆՈՒԹԻՒՆ ՃԱՍԹԻՆ ՈՒԻԼՊԻՆ**



Վեհափառը ողջունել է ետք այցը տարածաշրջան, յոյս յայտնեց որ ան ըլլայ օրհնաբեր եւ իր նպաստը բերէ մեր ժողովուրդի արդար իրաւունքներու պաշտպանութեան գործին մէջ:

Վեհափառը գոհունակութեամբ արձանագրեց, որ երկու Եկեղեցիներու միջև ջերմ յարաբերութիւնները փաստուած են պատմական հարուստ վկայութիւններով, հաստատելով որ Անկլիքան Եկեղեցին դժուարին պահերուն եղած է հայ ժողովուրդի կողքին:

Ն.Ս. Արքեպիսկոպոս Ուիլյի, անդրադառնալով Հայաստանի առջև ծառայած մարտահրաւերներուն, իր գօրակցութիւնը բերաւ

Ամենայն Հայոց Հայրապետին և հաւաստիացուց, որ հայ ժողովուրդը միայնակ չէ: Ան ընդգծեց, որ Հայ ժողովուրդի զաւակներու ցուցաբերած հաւատարմութեամբ առ Աստուած կը կարողանայ յաղթահարել բոլոր դժուարութիւններն ու փորձութիւնները: Ան կարևորեց նաև միասնական ջանքերու ներդրումը ի նպաստ տարածաշրջանի խաղաղութեան և կայունութեան հաստման: Հանդիպման աւարտին, Վեհափառը առանձնազրոյց ունեցաւ իր հիւրին հետ:

**ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱՂՐՈՒԹԻՒՆ և ՕԾՈՒՄ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՍՏԻ ՄԷՋ**

Հոկտեմբեր 8-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի ունեցաւ եպիսկոպոսական ձեռնադրութիւն և օծում: Սուրբ Տրդատի բաց խորանին առջեւ մատուցուած Հայրապետական Պատարագին ընթացքին, ձեռամբ Վեհափառ հօր, եպիսկոպոսութեան աստիճանին արժանացան Իրաքի հայոց թեմի առաջնորդ Հոգշ Ս. Օշական վարդապետ Կիլիկիականը, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Տնօրէն ժողովի ատենապետ Հոգշ Ս. Թեոդորոս ԾՎ Չաքարեանը, ԱՄՆ Հայոց Արևելեան թեմի առաջնորդ Հոգշ Ս. Մերոպ վարդապետ Պարսամեանը, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կալուածոց տեսուչ Հոգշ Ս. Կորիւն ԾՎ Պաղտասարեանը և Վիրահայոց թեմի առաջնորդ Հոգշ Ս. Կիրակոս վարդապետ Դաւթեանը:



Այս առիթով Ս. Էջմիածին ժամանած էին թեմակալ առաջնորդներ, ներկայացուցիչներ, Մայր Աթոռի բարերարներ, ուխտաւորներ:

Նախորդ օրը Իջման Սուրբ Սեդանին առջև, կատարուեցաւ ուխտադրման արարողութիւնը: Եպիսկոպոսացու վարդապետները, ծնրադիր վերահաստատելով Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցոյ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հաւատարմութեան ուխտը, ստորագրեցին իրենց երդմնագրերը:

Պատարագէն առաջ կատարուեցաւ ընծայման կարգը՝ ընծայացումներու հաւատքի ուղղափառութեան քննութիւնը: Վարդապետներու արժանաւորութեան մասին Ամենայն Հայոց Կաթողիկոսին առջև վկայեցին Հայ Եկեղեցոյ ներկայացուցիչներ ԱՄՆէն, Իրաքէն և Վրաստանէն՝ դպիրներ, կիսասարկաւագներ, սարկաւագներ, քահանաներ, եպիսկոպոսներ, ինչպէս նաև հաւատաւոր ժողովուրդը ներկայացնող աշխարհականներ:

Պատարագը սկսաւ Հայրապետական հանդիսաւոր թափօրով: Առընթերակներն էին Շիրակի թեմի առաջնորդ Գերշ Ս. Միքայել Արք. Աջապահեանը և Արցախի թեմի առաջնորդ Գերշ Ս. Վրթանէս Եպս Աբրահամեանը, խարտաւիլակն էր Աւստրալիոյ և ՆԶ-ի հայոց թեմի առաջնորդ, Հնդկաստանի և Ծայրագոյն Արևելքի Հայրապետական պատուիրակ Գերշ Ս. Հայկազուն Արք. Նաճարեանը:

«Աստուածային և երկնային շնորհ» շարականի երգեցողութեան ընթացքին վարդապետները, ծունկի եկած, վեր բարձրացնելով իրենց ձեռքերը, հերթական անգամ հրաժարեցան աշխարհէն:



Այնուհետև Մայր Աթոռի լուսարարապետ Գերշ Ս. Մուշեղ Եպս Բարայեանը թափօրով Խորան բարձրացուց Սրբալոյս Միւռնը, որով Ն.Ս Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, եպիսկոպոսութեան կոչելով Օշական, Թեոդորոս, Մեսրոպ, Կորին և Կիրակոս վարդապետները, օժեց անոնց ճակատներն ու աջ ձեռքերու բութ մատները: Ապա նորած եպիսկոպոսներուն յանձնուեցան իրենց եպիսկոպոսական իշխանութեան խորհրդանիշերը՝ գաւազան ու մատանի:

Իր պատգամին մէջ Վեհափառը ըսաւ. «Այսօր վերստին աղօթքը Մեր շուրթերին Ատրպէյճանի ռազմական ոճրագործութիւնների և Արցախի հայաթափման պատճառով լրջագոյն մարտահրաւերները դիմագրաւող մեր հայրենիքի և ժողովրդի համար՝ Ամենակալ Տիրոջ բարեխնամ կամօք ու ողորմութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարեցինք եպիսկոպոսական ձեռնադրութիւն և օծում:

... «Նմանուէք ինձ, ինչպէս որ ես՝ Քրիստոսին», - պատուիրում է Սուրբ Պօղոս առաքեալը: Տիրոջը նմանուելու կոչումն ու ձգտումը Եկեղեցու սպասաւորների համար ակունք են գորութեան՝ մշտարթուն քաջ հովիւ լինելու, հաւատացեալներին Քրիստոսով փրկութեան առաջնորդելու: Այսպիսի յանձնառութեամբ սպասաւորութեան է յորդորում առաքեալը՝ ասելով. «Արածեցրէք Աստծու այդ հօտը, որ ձեզ է յանձնուած» (Ա Պետ. 5.2)»:





Վեհափառը նշեց, որ այս գիտակցութեամբ զօրացեալ, պատմութեան ընթացքին, եպիսկոպոսներու քաջեռանդ առաջնորդութեամբ հայրենիքի և սփիւռքի տարբեր համայնքներուն մէջ զօրացած է հայոց հոգևոր կեանքը, զարգացած է մշակոյթն ու դպրութիւնը, անխաթար պահպանուած ազգային ինքնութիւնը: Նորին Սրբութիւնը հաստատեց, որ այսօր ալ եպիսկոպոսաց դասը, իրեն յանձնուած հօտին հանդէպ պատասխանատուութեամբ, անյոզնաբեկ ջանք ի գործ կը դնէ, որպէսզի հայ ժողովուրդը հաւատարիմ մնայ մեր հայրերու սուրբ հաւատքին և իր կեանքը խարսխէ քրիստոնէական արժէքներու վրայ:

«Ներկայիս, Արցախի հայաթափման հետևանքով մեր Սրբազան Հայրերը, հոգևոր սպասաւորները կանգնած են լուրջ պատասխանատուութեան առջև՝ նախանձախնդրութեամբ իրենց կարևոր նպաստը բերելու Արցախից բռնի տեղահանուածներին» ըսաւ Հայոց Հայրապետը:

Այնուհետև դիմելով նորած եպիսկոպոսներուն՝ «Մեր յորդորն է, որ հաստատուն պահէք ձեր ուխտը, ծառայէք և գործէք եւ Քրիստոսի սէրը զօրանայ հայոց կեանքին մէջ, և միասիրտ ու միակամ լինի մեր ժողովուրդը: Արթուն պահապանը եղէք հոգևոր և ազգային մեր

արժէքներին ու սրբութիւններին, առաջնորդէք մեր ժողովրդին աստուածապատուէր շաւիղներով, հայրենիքի լուսաւոր ու ապահով գալիքը կերտելու տեսլականով: Հայրենեաց համար այս բարդ շրջանում, շարունակէք ձեր բարի ջանքերը՝ սփոփելու և ըստ ամենայնի սատարելու բռնագաղթեալ արցախցի մեր քոյրերին ու եղբայրներին» ընդգծեց Նորին Սրբութիւնը:

Ապա, Վեհափառին գլխաւորութեամբ, ներկայ եկեղեցականաց դասը, մօտենալով նորած եպիսկոպոսներուն, համբուրեցին անոնց աջը և ճակատը՝ ստանալով անոնցմէ առաջին եպիսկոպոսական «Ողջոյնը»:

Յաջորդ օրը նորած եպիսկոպոսները մատուցեցին իրենց առաջին եպիսկոպոսական պատարագները:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 9-ԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒՒՏԱԻՈՐՆԵՐԸ

Ուխտաւորներուն կ'ուղեկցէր Իրաքի թեմի առաջնորդ Գերշ Տ. Օշական եպս Կիւլկիլեանը: Վեհափառը խոր գնահատանք յայտնեց այս ուխտագնացութեան համար եւ բացատրութիւն տուաւ ուխտաւորներուն եկեղեցւոյ կատարած եւ կատարելիք աշխատանքներուն մասին:

Վեհափառը իր սէրն ու օրհնութիւնը փոխանցելով ուխտաւորներուն՝ շնորհաւորեց իրաքահայերը իրենց առաջնորդին եպիսկոպոսական աստիճանի արժանանալուն առիթով եւ իր համոզումը յայտնեց, որ Օշական Սրբազան նորանոր ձեռքբերումներով պիտի արդիւնատրէ իր առաջնորդի ծառայութիւնը:



**ՀՈԿՏԵՄԲԵՐ 9-ԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՆՈՐԱՕԾ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ**

Նորին Սրբութիւնը յորդորեց Սրբազան Հայրերը հաստատուն պահել իրենց ուխտը, ամէն ջանք ու ճիգ ներդնել իրենց ծառայութեան վայրերուն մէջ ազգային-հոգևոր կեանքը զօրացնելու, հաւատք և յոյս ներշնչելու հայորդիներուն:



**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԸ
ՀՐԱԺԵՇՏԻ ՀԱՆԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԻ
ՍՈՒՐԲ ԱԹՈՌԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆՈՒՐԱԿԻՆ ՀԵՏ**



Հոկտեմբեր 11-ին Վեհափառը հրաժեշտի հանդիպում ունեցաւ Անդրկովկասի մէջ իր առաքելութիւնը աւարտող Սուրբ Աթոռի առաքելական նուիրակ, արքեպիսկոպոս Ժոզէ Ավելիւնօ Պեթանկուրի հետ:

Վեհափառ Հայրապետը իր բարձր գնահատանքը յայտնեց վերջինիս երկու Աթոռներու փոխյարաբերութիւններու առաւել սերտացման ուղղուած ջանքերուն համար: Ան հաստատեց, որ Մայր Աթոռի և Վատիկանի միջև ձևաւորուած են եղբայրական յարաբերութիւններ, որոնց վառ ապացոյցներն են Հռոմի Սրբազան Քահանայապետերու՝ Յովհաննէս-Պօղոս Երկրորդի և Ֆրանցիսկոս Պապերու այցելութիւնները Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ինչպէս և Հայոց Հայրապետի փոխադարձ այցելութիւնները Վատիկան, նաև Սուրբ Աթոռի Հայոց ցեղասպանութեան 100-ամեակի առիթով կազմակերպուած միջոցառումն ու Սուրբ Գրիգոր Նարեկացիի տիեզերական վարդապետ հռչակելը:

Իր խոսքին մէջ Հայոց Հովուապետը անդրադարձաւ տարածաշրջանին մէջ առկայ մարտահրաւերներուն, բռնի տեղահանուած արցախահայութեան իրաւունքներու պաշտպանութեան ու մարդասիրական խնդիրներուն: Այս առնչութեամբ Նորին Սրբութիւնը իր շնորհակալութիւնը յայտնեց Կաթոլիկ Եկեղեցոյ ներդրուող ջանքերուն յօգուտ բռնագաղթած Արցախցիներու:

Իր հերթին, շրջանաւարտ արքեպիսկոպոսը նշեց, որ հետագային ևս պիտի շարունակէ առաւելագոյն չափով իր նպաստը բերել երկու Եկեղեցիներու եղբայրական փոխյարաբերութիւններու զօրացման մէջ:

Իր հերթին, շրջանաւարտ արքեպիսկոպոսը նշեց, որ հետագային ևս պիտի շարունակէ առաւելագոյն չափով իր նպաստը բերել երկու Եկեղեցիներու եղբայրական փոխյարաբերութիւններու զօրացման մէջ:

**ՀՈԿՏԵՄԲԵՐ 18-ԻՆ, ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԸ ԸՆԴՈՒՆԵՑ**

**ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԻ ՄԷՉ
2022-Ի ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ
ADOBE ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՇԱՆՏԱՆՈՒ
ՆԱՐԱՅԱՆԸ**

Դափնեկիրին կ'ուղեկցէին «Սինոփսիս Արմենիա» ընկերութեան նախագահ Երուանդ Ջորեան և գործադիր տնօրէն Յովիկ Մուսայելեան:

Ողջունելէ եւ շնորհաւորելէ ետք պարոն Նարայանը, Վեհափառը մաղթեց որ վերջինիս մտքի արգասիքները



նպաստեն մարդկային կեանքի առաջընթացին ու բարօրութեան, խաղաղութեան ու արդարութեան: Պարոն Նարայան իր շնորհակալութիւնը յայտնեց Վեհափառին ընդգծելով, որ մեծ պատիւ է գտնուիլ հայ ժողովուրդի հոգևոր կեդրոն: Զրուցակիցները անդրադարձան մարդկութեան առջև ծառայած մարտահրաւերներուն յաղթահարման մէջ բարձր ճարտարարուեստի նորարարական ձեռքբերումներու կարեւորութեան:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԱՐՑԱԽԷՆ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան օժանդակութիւնը մատակարարելու արցախահայ տարագրուած հայրենակիցներուն, Արամ Ա. Կաթողիկոսի կողմէ նշանակուած է յանձնախումբ մը յանձինս՝ Գերշ Տէր Անուշաւան Արք. Դանիէլեանի (առաջնորդ ԱՄՆի Կիլիկեան Արեւելեան թեմին), Գերշ Տէր Թորգոմ Եպս Տօնյեանի (առաջնորդ ԱՄՆի Կիլիկեան Արեւմտեան թեմին), մեթր ժիրայր Հապիպեանի (ատենապետ Արաբական Միացեալ Էմիրութիւններու եւ Քաթարի Ու Շրջակայից թեմին) եւ տիար Յակոբ Լուսարարեանի (անդամ Լիբանանի Հայոց թեմի Ազգային Վարչութեան):



Յիշեալ յանձնախումբը եռօրեայ այցելութեամբ ուղեւորուեցաւ Հայաստան գործնական քայլերու դիմելու նպատակաւ:

8 Հոկտեմբերին, սրբազան հայրերը հանդիպում ունեցան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին հետ, անոր փոխանցեցին Արամ Ա. Կաթողիկոսին եղբայրական ողջոյնները եւ Վեհափառ Հայրապետին ու Կիլիկեան Ս. Աթոռին զօրակցութիւնը յայտնեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կողմէ տարուող մարդասիրական աշխատանքներուն: Գարեգին Բ. Կաթողիկոսը, իր կարգին, դրուատիքով արտայայտուեցաւ Նուիրապետական գոյգ Աթոռներուն միջեւ գոյութիւն ունեցող համագործակցութեան ոգիին մասին, զայն որակելով ցցուն ապացոյց հայ եկեղեցւոյ ներքին միութեան ու զօրութեան, միաժամանակ անդրադարձաւ թեմակալ առաջնորդներու հետ տարուած բարեսիրական աշխատանքներուն:

Յիշեալ հանդիպումէն ետք, առաջնորդ սրբազան հայրերը, յանձնախումբի միւս անդամներուն հետ, այցելեցին Երեւանի, Պոռշեանի եւ Կոտայքի մէջ ապաստանած գաղթականներուն եւ իրենց յորդորներով հաւատք ու յոյս ներշնչեցին ներկայ ահաւոր տագնապներէն ամէնաշուտ ժամանակին դուրս գալու վճռականութեամբ: Յանձնախումբը նաեւ հանդիպում ունեցաւ Արագածոտնի մարզպետ Սէրգէ Մովսիսեանի հետ:

Յանձնախումբը իր այցելութեան ընթացքին կատարեց նիւթական յատկացումներ տեղահանուած ընտանիքներուն:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19-ԻՆ ՎԵՀԱՓԱՌԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՓՈԽԱՆՍԱՐԱՐ ՄԻԿԼՈՇ ՓԱՆԻԻ ԳԼԽԱՒՈՐԱԾ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Նորին Սրբութիւնը անդրադառնալով հայ-հունգարական յարաբերութիւններու վերականգնման, իր գնահատանքը յայտնեց Հունգարիոյ Մերձաւոր Արևելքի երկիրներուն մէջ քրիստոնէայ համայնքներուն, Արցախէն բռնի



տեղահանուած հայութեան ցուցաբերած աջակցութեան և 2021-ին հինգ հայ ռազմագերիներու հայրենադարձման համար միջնորդութեան համար:

Իր հերթին փոխնախարարը, անդրադառնալով հայ-հունգարական միջ-պետական կապերու սերտացման, հաւաստիացուց, որ Հունգարիոյ իշխանութիւնները պիտի շարունակեն իրենց աջակցութիւնը ցուցաբերել արցախահայութեան և միջնորդական ջանքեր գործադրել հայ գերիներու վերադարձման ուղղութեամբ:

ՀՈԿՏԵՄԲԵՐ 19-ԻՆ, ՎԵՀԱՓԱՌԻՆ ՀԱՆՐԻՍԱՊԵՏՈՒԹԵԱՍԲ ՄԱՅՐ ԱԹՈՌԻՆ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԻ ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՒ ՅԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ



Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ «Սուրբ Ներսէս Շնորհալի» պատույ բարձր շքանշաններ շնորհուեցան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վերստուգիչ յանձնախումբի անդամներ տիարք Խաչատուր Սուրբաֆեանին և Լուիֆիկ Հարոյեանին, իսկ «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» պատույ բարձր շքանշանին արժանացաւ Կաթողիկոսական գրասենեակի պատասխանատու քարտուղար օրիորդ Անահիտ Անտոնեանը՝ ի գնահատութիւն Հայ Եկեղեցւոյ մատուցած երկարամեայ ծառայություններուն:

«Բարձրօրէն գնահատում ենք Ձեր ազնուութիւնը,

որ Դուք, Մեր հրաւերին ընդառաջ՝ Ձեր հմտութիւններն ու կարողութիւնները շուրջ երկու տասնամեակ սիրով ի սպաս էք բերում նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինութեանն ու պայծառութեանը՝ որպէս անդամ Մայր Աթոռի Վերստուգիչ յանձնախմբի: Ձեր ծառայութեան ընթացքին Մենք ականատես ենք եղել աշխատանքի հանդէպ ունեցած Ձեր պահանջկոտ ու բժախնդիր վերաբերմունքին, որը յաջողութիւններ է ապահովել Մայր Աթոռի արդիւնաւոր գործունէութեան համար» գրուած է Պրն Սուրբաֆեանին ձօնուած Կոնդակին մէջ:

Պրն Հարոյեանի Կոնդակին մէջ արձանագրուած է. «*Գոհունակութեամբ ենք անդրադառնում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայություններին: Իբրև անդամ Մայր Աթոռի Վերստուգիչ յանձնախմբի՝ Ձեր հարուստ փորձառութեամբ ու կարողութիւններով, Դուք գնահատարժան օգտակարութիւն էք բերում Սուրբ Էջմիածնին: Նախընթաց տասնամեակներին Մենք գոհունակութեամբ ականատես ենք եղել Ձեր եկեղեցասիրութեանն ու նախանձախնդիր և նուիրեալ գործունէութեան»:*

Օրիորդ Անահիտ Անտոնեանին ուղղուած Կոնդակին մէջ նշուած է. «*Մեզ համար գոհունակութիւն է, որ մանկավարժական առաքելութեանը զուգընթաց Դուք նաև պատասխանատու պաշտօններ ստանձնեցիք Արարատեան Հայրապետական Թեմում և ապա՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Կաթողիկոսական գրասենեակում, որդիական սիրով ու պատրաստակամութեամբ Ձեր ձիրքերն ու մտաւոր կարողութիւններն ի սպաս բերելով մեր Սուրբ Եկեղեցու առաւել շինութեանն ու պայծառութեանը: Ամենօրեայ Ձեր ծառայութեան մէջ Մենք գոհունակութեամբ ականատես ենք պարտականութիւնների հանդէպ Ձեր բժախնդիր վերաբերմունքին, եռանդին ու ջանադրութեանը»:*

ՀՈԿՏԵՄԲԵՐ 20-ԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ԵԱՆ ՄԷՋ ՊԵԼՃԻՔԱՅԻ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԴԵՍՊԱՆ ԷՐԻՔ ՏԷ ՄՈՅՆՔԸ

Հանդիպման՝ Հայոց Հովուապետը գոհունակութեամբ ընդգծեց ՊելՃիքայի հայ համայնքին ներդրումը հայ-պելՃիքական յարաբերութիւններու սերտացման մէջ եւ իր երախտագիտութիւնը յայտնեց ՊելՃիքայի Հայաստանին զօրակցութեան համար:

Անդրադառնալով մեր երկրին առջև ծառացած անվտանգային և գոյաբանական հարցերուն՝ Նորին Սրբութիւնը կարևորեց միջազգային հանրութեան, ինչպէս և ՊելՃիքայի կողմէն ազդու միջոցներու գործադրումը:

Դեսպանը անդրադարձավ տարբեր ոլորտներու մէջ փոխ-համագործակցութեան խորացման ու զարգացման հեռանկարներուն եւ իր պետութեան պատրաստակամութեան՝ աջակցելու Արցախէն բռնի տեղահանուած անձանց խնդիրներուն յաղթահարման: Դեսպանը նաև տեղեկութիւններ փոխանցեց Պելճիքայի մէջ բուժուող Ստեփանակերտի պայթումէն վիրաւորուած արցախցիներու առողջական վիճակին մասին:

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ, ՎԵՀԱՓԱՌԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ «ՀԱԼԱԾԵԱԼ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ և ՀՈՒՆԳԱՐԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԻ» ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ ԹՐԻՍԹԱՆ ԱԶՊԷՅԸ, ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԴԵՍՊԱՆ ԱՆՆԱ ՄԱՐԻԱ ՇԻԿՈՅԻ

Պրն. Ազպէյ Նորին Սրբութիւնը տեղեկացուց Մերձաւոր Արևելքի երկիրներու քրիստոնէայ համայնքներու աջակցութեան ծրագրերու, ինչպէս նաև 2021-ին հայ ռազմագերիներու վերադարձման գործին մէջ իր անմիջական ներգրաւման մասին:

Հանդիպման ընթացքին տեղի ունեցաւ մտքերու փոխանակում Հայոց Եկեղեցոյ և Հունգարիոյ իշխանութիւններու միջև մարդասիրական փոխգործակցութեան հեռանկարներուն:



ՀՈԿՏԵՄԲԵՐ 24-ԻՆ ՎԵՀԱՓԱՌԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՀ-ԵԱՆ ՄԷՋ ԵԳԻՊՏՈՍԻ ԱՐՏԱԿԱՐԳ և ԼԻԱԶՕՐ ԴԵՍՊԱՆ ՍԵՐԵՆԱՏ ՄՈՀԱՄՄԷՏ ՍՈՒԼԷՅՄԱՆ ԳԱՄԻԸ



Հանդիպման մասնակցեցաւ նաև Ղպտի Ուղղափառ Եկեղեցոյ սպասաւոր Հայր Իլարիոնը, որ իր աստուածաբանական ուսումը կը շարունակէ Երևանի պետական համալսարանի Աստուածաբանութեան Բաժնին մէջ:

Նորին Սրբութիւնը ընդգծեց, որ հայ-եգիպտական բարեկամական յարաբերութիւնները դարաւոր պատմութիւն ունին եւ գնահատեց Եգիպտոսի թոյլատուութիւնը Հայոց Ցեղասպանութենէն փրկուած հայորդիներուն կազմակերպելու իրենց ազգային-հոգևոր կեանքը: Ան նաև յայտնեց իր մտահոգութիւնը այսօրուան ստեղծուած վտանգաւոր կացութեան եւ անկէ բխած

կարիքներուն մասին: Ան նաև գոհունակութեամբ արձանագրեց Հայ և Ղպտի Քոյր Եկեղեցիներու միջև առկայ եղբայրական ջերմ փոխգործակցութիւնը:

Դեսպանը Վեհափառին փոխանցեց Ղպտի Ուղղափառ եկեղեցոյ հոգևոր պետ Թաուատրոս Բ Պատրիարքին ողջոյններն ու բարեմաղթանքները եւ հաւաստիացուց, որ ամէն ջանք պիտի դնէ հայ-եգիպտական յարաբերութիւններու աւելի սերտացման և համագործակցութեան առաւել ամրապնդման ի խնդիր:

24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ՎԵՀԱՓԱՌԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄՇԱԿՈՑԹԻ ԿԵԴՐՈՆԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍՍՏԻ ՍՈՎԱՀԷՏԸ

Նորին Սրբութիւնը անդրադարձաւ երկու երկրներու սերտ համագործակցութեան եւ համատեղ իրակա-նացուած միջոցառումներուն:

Վեհափառը խոր մտահոգութիւն արտայայտեց Մերձաւոր Արեւելքի մէջ պատերազմական գործողութիւններու և անոնց աղիտալի, ողբերգական հետևանքներուն առնչու-թեամբ: Նորին Սրբութիւնը նաեւ անդրադարձաւ Ատրպեյ-ճանի կողմէ ի գործ դրուած ոճրային գործողութեանց:

Իր հերթին Պրն. Սովահէտ Վեհափառ Հայրապետին ներկայացուց նոր պաշտօնին մէջ երկու երկրիներու մշակութային կապերու ամրապնդման վերաբերող իր ծրագիրները:



ՀՈԿՏԵՄԲԵՐ 24-ԻՆ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԻՊՐՈՍԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՕԳՆԱԿԱՆ ՆԷՈՓՈԼԻՄ ՓՐՈՏԻՐԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԸ

Վեհափառ Հայրապետը ընդգծեց, որ երկու բարեկամ ժողո-վուրդները ունին պատմական համանմանութիւններ, և իրենց զօրեղ հաւատքով կարողացած են դիմագրաւել բազմաթիւ փորձու-թիւններ:

Իր հերթին Փոքֆիրիոս Սրբազանը նշեց, որ իր այցին նպատակը առողջապահական է, ան արցախահայութեան դեղորայքային օգնութեան և Կիպրոսի Ուղղափառ Եկեղեցւոյ զօրակցութիւնը յայտնելու համար եկած էր:

«ԳԱԻԻԹ» ՀԱՐԹԱԿԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ տեղի ունեցաւ «Գաւիթ» հարթակի հանդիպում «Հայաստան և Արցախ. գոյաբանական մարտահրաւերներ և յաղթահարման ուղիներ» թեմայով: Բազմա-կողմանի քննարկման նիւթ դարձնելով հայրենիքի առջև ծառայած հիմնախնդիրներն ու սպառնալիք-ները, հայրենիքի և սփիւռքի մէջ բարձրաձայնուող մտահոգութիւնները՝ հարթակի մասնակիցները հանդէս եկան յայտարարութեամբ.

«Մենք՝ «Գաւիթ» հարթակի մասնակիցներս՝ հոգևորականներ, հասարակական գործիչներ, մասնագիտական ու փորձագիտական հանրոյթների

ներկայացուցիչներ, «Հայաստան և Արցախ. գոյաբանական մարտահրաւերներ և յաղթահարման ուղիներ» թեմայի շրջանակներում քննարկելով Հայրենիքի առջև ծառայած հիմնախնդիրները, խոր մտահոգութեամբ արձանագրում ենք.

Աղբրեջանի կողմից տարիներ շարունակ Հայաստանի Հանրապետութեան և Արցախի Հանրապե-տութեան դէմ սերմանուող հայատեացութիւնը, սանձազերծուած պատերազմները, ցեղասպան

1գործողությունները և ագրեսիան հանգեցրել են Արցախի հայաթափմանը և Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքների բռնազավթմանը:

Խիստ մտահոգիչ են առկայ ծանր իրավիճակի յանդիման ՀՀ իշխանությունների անհամարժեք դիրքորոշումներն ու գործողությունները, ներազգային կեանքում տեղ գտնող թշնամանքի ու ատելության դրսևորումները:

Մեծապես գիտակցելով ներկայ ծանր մարտահրավերների յաղթահարման գոյաբանական անհրաժեշտությունը՝ «Գաւիթ» հարթակի մասնակիցներս յայտարարում ենք.

1. Ազգային կեանքում յառնած սպառնալիքները լուծումներ պետք է գտնեն բացառաբար Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքների անձեռնմխելիության և Արցախի Հանրապետության ժողովրդի՝ հայրենի հողի վրա ազատ ու անկախ ապրելու իրաւունքի շրջանակներում: Այս առումով կարևոր է բարեկամ ու դաշնակից երկրների հետ հաւասարակշուած յարաբերությունների զարգացմամբ, փոխվտահուրեան մթնոլորտում փոխշահաւետ գործակցությունը և ողջ միջազգային հանրութեան զորակցութեան ապահովումը,



2. Արցախի բռնազավթմամբ և հայաթափմամբ Արցախեան հիմնախնդիրը չի լուծուել. Արցախահայութեան ազատ կամարտայայտութեամբ միջազգային հանրային իրաւունքի համաձայն ստեղծուած Արցախի Հանրապետությունը կայ և պետք է լինի: Հնարաւոր բոլոր ձանապարհներով, առկայ ողջ գործիքակազմի կիրառմամբ պետք է ամրագրել Արցախի ժողովրդի խախտուած իրաւունքների վերականգնման, ազատ ինքնորոշման և հայրենի հողի վրայ ինքնիշխանութեան հայեցակարգը,

3. Հարկ է գորաւիզ լինել բռնի տեղահանուած և ծանրագոյն վիճակում գտնուող մեր եղբայրներին ու քոյրերին և ըստ ամենայնի հոգալ նրանց օրախնդիր հոգևոր-բարոյական, իրաւական, տնտեսական ու սոցիալական կարիքները՝ մեղմելու նրանց կրած ահռելի կորուստների հետևանքները և այս դժուարին շրջանում նպաստելու իրենց կեանքի կազմակերպմանը Հայաստանի Հանրապետությունում,

4. Բոլոր տեսակի բանակցային գործընթացներում և միջազգային ատեաններում հարկ է հետևողականօրէն առաջ մղել առնանգուած, գերեվարուած և Բաքվում շինծու մեղադրանքներով ապօրինաբար պահուող զինծառայողների և քաղաքացիական անձանց, այդ թուում նան Արցախի Հանրապետութեան քաղաքական ղեկավարութեան ներկայացուցիչների անյապաղ ազատ արձակման պահանջը, ինչպէս նան անյայտ կորած բոլոր անձանց ճակատագիրը պարզելու անհրաժեշտությունը,

5. Բանակցություններում և միջազգային ատեաններում բարձրաձայնել Արցախի պատմամշակութային և հոգևոր ժառանգութեան պահպանման, սրբատեղիների գործածութեան իրաւունքների և դէպի սրբավայրեր ուխտագնացությունների կազմակերպման խնդիրները, որոնք իրենց ամբողջական լուծումը կը գտնեն արցախահայութեան հայրենադարձման, ինքնորոշման իրացուած իրաւունքների ճանաչման և Արցախի թեմի առաքելութեան լիարժեք վերականգնման միջոցով:

Մեր կոչն ենք ուղղում հայրենի և աշխարհասփիւռ մեր ժողովրդի լայն շրջանակներին, առաջին հերթին՝ ազգային, հասարակական, քաղաքական կազմակերպություններին, մշակոյթի, գիտութեան ու կրթութեան գործիչներին՝ պատասխանատուութիւն ստանձնելու հայրենիքի և հայոց պետականութեան ապագայի նկատմամբ, համախմբուելու մեր երկրի, մեր ինքնութեան պահպանութեան ու մեր ապրելու իրաւունքի պաշտպանութեան գաղափարական առանցքի շուրջ և համընդհանուր ջանքերով կասեցնելու շարունակուող պարտությունների ու ձախողումների կործանարար շղթան:

Թող Աստուած անսասան պահի հայրենի մեր պետականությունը և օգնական ու պահապան լինի համայն մեր ժողովրդին այսօր և միշտ և յաւիտեանս. Ամէն:



**ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԸ և ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆՅԱՆ
ԵԱՀԿ ԳԼԽԱԻՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ՀԵՏ**



Գերշ. Ս. Խաժակ Արք. Պարսամեանը, Գերշ. Ս. Տաթև եպս Յակոբեանը, Գերշ. Ս. Սերովբե եպս Իսախանեանը և Գերշ. Ս. Տիրան եպս Պետրոսեանը, Հոկտեմբեր 25-ին, Վիեննայի մեջ հանդիպեցան ԵԱՀԿ գլխավոր քարտուղար Հելգա Շմիդի հետ: Սրբազան Հայրերը տիկին Շմիդին փոխանցեցին Վեհափառ հոր օրհնութիւններն ու բարեմաղթանքները, ինչպէս նաև ներկայացուցին Հայ Եկեղեցւոյ կողմէն իրականացուող աշխատանքները՝ տարածաշրջանային խաղաղութեան առնչուած, Արցախէն բռնի տեղահանուածներու կարիքներուն հոգածու-

թեան եւ իրաւունքներու պաշտպանութեան, ինչպէս նաև պատմամշակութային ու կրօնական ժառանգութեան պահպանութեան:

Առաջնորդները նշեցին, որ ժամանակն է, որպէսզի ի պատասխան ատրպէճանական իշխանութիւններու որդեգրած ցեղասպանական քաղաքականութեան և արցախահայերու հանդէպ իրականացուցած էրնիք գտումներու, միջազգային հանրութիւնը պատժամիջոցներ կիրարկէ Ատրպէճանի նկատմամբ՝ կանխելու համար անոր ռազմատենչ քաղաքականութեան հետագայ դրսևորումները: Ատրպէճանի նման կեցուածքը առիթ պէտք է հանդիսանայ, որ Եւրոմիութիւնը վերագնահատէ վերջինիս հետ իր փոխարաբերութիւնները, ձեռնարկէ ռազմական յանցագործութիւններու մանրակրկիտ քննութեան, ինչպէս նաև միջազգային երաշխիքներ ստեղծէ՝ ապահովելու տեղահանուած արցախահայերու վերադարձը իրենց պատմական հայրենիք, ինչպէս նաև նրանց անվտանգ կեանքն ու կենսագործունէութիւնը: Կարգ մը երկիրներ Ատրպէճանի ցեղասպանական գործողութիւնները դատապարտող բանաձևեր ընդունած են, սակայն Ատրպէճանը ցայսօր կ'անտեսէ միջազգային հանրութեան կոչերն ու որոշումները:

Տիկին Շմիդը վստահեցուց, որ ԵԱՀԿ-ը և անձնապէս ինքը կ'ընեն հնարաւորը՝ նպաստելու տարածաշրջանին մէջ յարատև ու արդար խաղաղութեան հաստատման, որուն մէջ պէտք է նկատի առնուի նաև Արցախի ժողովուրդին վերադարձի իրաւունքն ու անվտանգ կեանքն իրենց բնօրրանին մէջ: Ան նաև հաւաստիացուց, որ ԵԱՀԿ-ը շարունակելու է իր աջակցութիւնը բերել ի նպաստ տեղահանուածներու մարդասիրական և հոգեբանական կարիքներու հոգածութեան:

Հանդիպման աւարտին, Սրբազան Հայրերը Հայ Եկեղեցւոյ Եւրոպայի բոլոր առաջնորդներուն անունով նամակ փոխանցեցին տիկին Շմիդին, ուր ամփոփուած էին այն հիմնական կետերը, որոնք քննարկման նիւթ դարձան հանդիպման ընթացքին:

**27 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ՎԵՀԱՓԱՈՒ ԸՆԴՈՒՆԵՑ
ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՊԱՏԸՆ-
ՎՈՒՐԹԵՆՊԷՐԿԻ ԵՐԿՐԱՍՏԱՍՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ
ՊԱՐՊԱՐԱ ԲՈՇԻ ԳԼԽԱԻՈՐԱՑ
ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ**

Տիկին Պոշ անդրադարձ կատարեց 1988-ի աւերիչ երկրաշարժէն ետք Հայաստանի մէջ Գերմանական Կարմիր Խաչի գործունէութեան, խօսեցաւ նաև «Յուսոյ տուն բարեգործական կեդրոն» հիմնադրամի նախաձեռնած «Գթութեան խոհանոց» ծրագրին մասին: Ան հաւաստիացուց Հայոց Հայրապետը, որ նախաձեռնուած աջակցութեան ծրագրերը պիտի շարունակուին, յատկապէս առաջնահերթ պիտի նկատուին տեղահանուած արցախցիներու կարիքները:



27 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ՎԵՀԱՓԱՌԸ ՀԱՆԴԻՊԵՑԱԻ ՄԱՅՐ ԱԹՈՒՒ ՄԷՋ ԵՐԵՔՇԱԲԱԹԵԱՅ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԱԻԱՐՏԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԵՒ ՍՓԻՒՌԷՆ ԺԱՄԱՆԱԾ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ



հասարակութեան առջև ծառայած արդի մարտահրաւերները:

Հոկտեմբեր 10-էն մեկնարկուած այս դասընթացները համակարգուած են «Գարեգին Ա» կրթական կեդրոնի տնօրէն Գերշ Տ. Վահան եպիսկոպոս Յովհաննիսեանի կողմէ:

Մասնակից հոգևորականները հնարաւորութիւն կ'ունենան թարմացնելու իրենց աստուածաբանական, ծիսական և պատմական գիտելիքները: Հանդիպման ընթացքին Վեհափառը կարևորեց վերապատրաստման այս դասընթացքները, որոնք հնարաւորութիւն կու տան տարբեր թեմերէ ժամանած հոգևորականներուն համախմբուելու, փոխանակելու իրենց հոգևոր փորձառութիւնները, ինչպէս նաև քննարկելու Եկեղեցւոյ և



ՀՈԿՏԵՄԲԵՐ 27-ԻՆ ՎԵՀԱՓԱՌԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ և ԱՌԵՒՏՈՒՐԻ ՆԱԽԱՐԱՐ ՓԵԹԵՐ ՄԻՅԱՐՏՈՆ

Ներկայ էին նաև Հունգարիոյ ՀՀ-եան դեսպան տիար Աշոտ Սմբատեանը, ՀՀ-ի մէջ Հունգարիոյ դեսպան տիկին Աննա Մարիա Շիկոն և Հունգարիոյ «Հալածեալ քրիստոնէաներու օգնութեան և հունգարական աջակցութեան ծրագրի» պետքարտուղար Թրիսթան Ազպէր: Նախարարը ընդգծեց, որ Հունգարիան պատրաստ է տարբեր ծրագրեր իրականացնել տեղահանուած

արցախցիներուն աջակցութիւն ցուցաբերելու համար, ինչպէս նաև հետևողական քայլեր ձեռնարկել Արցախի հոգևոր-մշակութային ժառանգութեան պահպանման ուղղութեամբ:

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ՎԵՀԱՓԱՌԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԴԱԶԱՐԱԻԱՆԻ ՍՈՒՐԲ ՆԱՐԵԿ ՄԵՆԱՍՏԱՆԻ ՔՈՅՐԵՐԸ և ՅԱՐԱԿԻՑ ԳԻՒՂԵՐՈՒ ՏԱՐԲԵՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Քոյր Ազատուհի Խաչատրեանը տեղեկացուց, որ դեռևս մէկ տարի առաջ թեմակալ առաջնորդ Գերշ Տ. Մկրտիչ եպս Պռոշեանի օրհնութեամբ մենաստանին մէջ կազմակերպուած են հոգևոր և մարդասիրական նիւթերու դասընթացքներ յարակից գիւղերու դպրոցականներու համար:

Վեհափառը մեծ գովասանքով իր օրհնութիւնը բաշխեց քոյրերուն: Ան կարևորեց դպրոցականներու հաղորդակցութիւնը Եկեղեցւոյ հետ, որով լաւագոյն հնարաւորութիւն կ'ընձեռուի ճանաչելու Հայ Եկեղեցին:

Աւարտին, Վեհափառը պատասխանեց դպրոցականներու հարցումներուն:





ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ 850-ԱՄԵԱԿԻ ՅՈՒՇԱՀԱՆԴԷՍ

Հովանաւորութեամբ Բարձրաշնորհ
Տէր Հայկազուն
Արքեպիսկոպոս Նահարեանի
Առաջնորդ Աստրալիոյ եւ
Նոր Զելանտայի Հայոց Թեմին



Միացեալ Կազմակերպութեամբ
Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի
Առաջնորդարանին եւ Համազգայինի
Աստրալիոյ Շրջանային Վարչութեան



Բանախօս՝

Այս Առիթով Երեւանէն Յատուկ Հրաւիրուած
Երաժշտագետ-Միջնադարագետ

Դոկտոր Փրոֆէսոր

ՄՀԵՐ ՆԱԴՈՅԵԱՆ

Տեղի կ'ունենայ

Ուրբաթ 10 Նոյեմբեր 2023-ի

Երեկոյեան ժամը 7.30-ին
NORTH RYDE SCHOOL OF ARTS
Cox's Road, Ryde-ի Սրահին մէջ

Հրաւիրուած է Աստրալահայ Համայնքը

Յաւելեալ մանրամասնութեանց
համար դիմել

Լիլիկ Կոտոյեանին 0433-655-943
Նորա Պաստաճեանին 0427-640-882
Նանոր Աշիբեանին եւ Նշան Պաստաճեանին
Հեռ. 91614000 կամ 0487-708-800

Email: diocese@armenian.com.au

DIOCESAN NEWS



1 OCTOBER 2023 – Prayer for Artsakh

On October 1, the long-awaited blessing of the Holy Chrism (*Miuron*) was to take place in Holy Etchmiadzin. His Eminence Archbishop Haigazoun Najarian was already at the Mother See in anticipation to participate in the Blessing of the Holy Chrism (*Miuronorhnek*). Similarly, Armenian pilgrims from Australia were also preparing to be present. However, the devastation of Artsakh occurred and the blessing of *Miuron* was postponed as were the travel of Diocesan representatives.

By the blessing of His Holiness the Catholicos, and by the decision of the Supreme Spiritual Council, October 1 was appointed a day of prayer for Artsakh in all Armenian churches of Armenia and the Diaspora. Sadly after thirty years, the exception was the Diocese of Artsakh ...

